

ՁԷՅՔՈՒՆՑԻ ՀԱՃԻ ԿԱՐԱՊԵՏ ԳՈՍՈՒՎԵԱՆ

Հ. Ե. Ս
Հայկեայ 1919

Ձ Է Յ Ք Ո Ւ Ն Ց Ի

Ա Ն Յ Ե Ա Լ Ը



Թուրք եւ հայ ընդհարումներ. — Թրքական բար-
բարոսութիւնք. — Ձինուորագրութիւնք. — Տեղա
հանութիւնք. — Բռնաբարութիւնք. — Տարագրու
թիւնք եւ առեւանգումներ ելլն.



ԳԱՂԻՐԷ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ՕՆՆԻԿ ՀԱԼԷՊԼԵԱՆ

Պեյն ել-Սուրեյն Եկեղեցիին դիմաց

1918

ՉԷՅՔՈՒՆՑԻ ՀԱՃԻ ԿԱՐԱՊԵՏ ԳՈՄՈՒՎԵԱՆ

Չ Է Յ Ք Ո Ւ Ն Ի

Ա Ն Յ Ե Ա Լ Ը

198

Թուրք եւ հայ ընդհարումներ. — Թրեալիան բար-
բարոսութիւնք. — Զինուորագրութիւնք. — Տեղա-
հանութիւնք. — Բռնաբարութիւնք. — Տարագրու-
թիւնք եւ արեւանգումներ ելլն.

ԳԱՀԻՐԷ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ՕՆՆԻԿ ՀԱԼԷՊԼԵԱՆ

Պէյն եւ Սուրէյն Եկեղեցիին դիմաց

1918

ՁԷՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԸ

Ձէյթուների անցիալը՝ 1895էն մինչև 1917 ինչ որ եղած է ամբողջ կը պատմեն:

Ձէյթուների 1895ին եղած պատերազմին, Ձէյթուների թուրքերուն ըրած չարչարանացը չկրնալով գիմանալ, բոլոր ժողովուրդը միասին ըլլալով պատերազմեցանք և շահեցանք: 1895ի այս պատերազմը 36րդն է, ամէն անգամին մենք շահած ենք: Իմ տարիքս 50 է - եղած պատերազմին 5ը գիտեմ ու լսած եմ: Առաջինը Խուրչիա փաշան է, որ 30,000 զինուորով եկաւ պատերազմեցանք և յաղթեցինք: Երկրորդը Ազիզ փաշան 40,000 զինուորով և Չէրքէզներով եկաւ մինչև Ձէյթուների ստորոտները, հոն ամբողջը Չարգեցինք, և այն տեղին անուշը մինչև հիմա կոտորածի ձոր կը կոչուի: Երրորդը Չէքի փաշան, որ 20,000 զինուորով եկաւ և Չարգուեցաւ: Չորրորդը Սալիֆ փաշան, որ 25,000 զինուորով եկաւ և 3000 հոգիով ետ դարձաւ: Հինգերորդը Ֆէրիք փաշան, Էանէմ փաշան և Քեամիլ փաշան 36000 զինուոր, 36000է աւելի պաշտպոզութեւ 40 թնդանօթով եկան: 72,000 զինուորի դէմ պատերազմեցանք և վաստակեցանք:

Այսքան տարիներէ ի վեր թուրքերը բոլոր աշխարհը ձեռք բերած ժամանակ 30 միլիօն ժողովուրդնիս կրտած կոտորած ոչնչացուցեր է: անկէ յետոյ, Սատուն, Վան, Մուշ թէեւ մեծ Հայաստան կը կոչուին և այնքան ալ շատ ժողովուրդ ունեցած ժամանակ, ամեն ատեն կոտորուած են, և 40 միլիօն ժողովուրդը կոտորուած ժամանակ՝ ո և է տեղ մը կամ պատմութեան մէջ չի լսուեցաւ թէ՛ այսինչ տեղի հայերը այսքան թիրք կամ գի-

նուոր ջարդեցին, միմիայն քաջ Զէյթունն է, որ ամեն ժամանակ պատերազմած և յաղթած է :

Զէյթունը եօթը տան վրայ հիմնուած է և այսքան ժամանակ հաստատ մնացած է . ինչպէս կըլլայ որ 30 միլիօն ժողովուրդնիս կոչնչանայ, և եօթը տունէն 19000 ժողովուրդ կաւելնայ : Մինչև հիմայ Աստուած այս քաղաքը ստանած և ազատած է՝ ոչ թէ կարիճութիւնով այլ միմիայն եղբայրսիրութիւնով և սէր միութեան զօրութիւնովը՝ զոր օրինակով պիտի հաստատեն :

1895ի պատերազմին՝ թնդանօթ, զէնք, փամփուշտ և սրաչար չունէինք, այս ժամանակները կառավարութիւնը ժողովուրդը կը նեղեր տուրքի համար, պէտք է դիտնալ, որ արհեստաւորներուն գործիքները և խեղճ աղքատ ժողովուրդին տունէն, ցորենը, գարին, պուկուրը և կննդանիները, որ մէկ եղը 200 դրուշ արժած ատեն, 3 եղը 50 դրուշի ծախեցին, այն ատեն ժողովուրդը ըսաւ թէ՛ հս աղա եմ կամ թէ՛ ես կարիճ մի եմ, կառավարութիւնը ինձմէ բան մը չուղէր, ու ինչ որ կուղէ թո՛ղ այնպէս ըլլայ . այլ միտան միանամուր պատերազմի պատրաստեցանք և դրօշակները բացուեցան, ո և է երբէք զօրութիւն չունեցած ժամանակնիս պատերազմի սկսիլը, միայն սէր միութեան և եղբայրսիրութեան զօրութիւնն է, ինչ որ է պատերազմի սկսանք և երրորդ օրը զօրանոցը դրաւեցինք, 1500 մարթինի հրացան, ¼ թնդանօթ, 1900 սնտուկ փամփուշտ, 700 զօրք և կառավարութեան պաշտօնակայները դերի առինք և մեղմէ երեք օր հետաւորութիւն ունեցող Անտրըն գայմագամըղի վրայ յարձակեցանք, Գիւղերէն զէնքը և ուտեստը առնելէ յետոյ ջարդ և թալան ընելով բաւական զօրութիւն և սրաչար պատրաստեցինք 55 օրուան համար

յետոյ 36 հազար զինուոր, 36 հազարէն աւելի սաշը-սօ-
զուք և 40 թնդանօթով եկան ու սկսանք պատերազմի :
Գիշեր ցորեկ 72 հազար զինուորի դէմ, մինչև 75 օր ա-
րիւնսանդ պատերազմ ըրինք, այսչափ զինուորի դէմ
ձեռքը դէնք բռնող 2000ի չափ կայինք 4500 մարթինով
500 ալ չախմախը, այսու հանդերձ դարձեալ օձիքնիս
ձեռք չտուինք, մեր վնասը 65 հողի է իսկ թուրքերուն
վնասը անհաշիւ է : Այս անգամ ալ Սուլթանն Համիա Եւ-
րոպական տէրութեանց կը դիմէ, մենք ոչ հետազիր և ոչ
ալ հետաձայն ունէինք, դարձեալ Սուլթանն Համիա լուր
տուաւ մեզի, այն փամանակ եկան՝ Անգլիական, Ֆրանս-
սական, իտալական, ռուսական և գերմանական հիւպա-
տոսները հաշտութեան բանակցելու համար թրքաց բանա-
կատեղին եկան : Զէյթունի աղաները և էֆէնտինները բա-
րի զալուստ մաղթելու համար զացին զիմաւորեցին, յե-
տոյ հիւպատոսները փաշաները հրամանատարները և Զէյ-
թունի աղաները ու էֆէնտինները միասին Զէյթուն եկան
և սկսան վիճարանութեան մեր մեծերուն հետ : Անգլիոյ
հիւպատոսը ըսաւ թէ՛ տեսէք աղաներ, հիմա մենք ձեր
մէջ հաշտութիւն գոյացնելու եկած ենք, հարկաւ ձեզի
բան մը սխալի ըսենք : — Հարկաւ ըսելիք բաներ ունիք,
հրամանեցէք ըսէք, — Անգլիոյ հիւպատոսը ըսաւ, Տէրու-
թիւն տէրութեան դէմ պատերազմ կընէ՛ ըլլայ զօրանոց
ըլլայ զինուոր և չն, գերի կառնէ այնպէս չէ, բայց եր-
բէք լսեցիք թէ՛ տէրութիւն մը զրաւամ զօրանոցը այրէ
և կամ առած գերիները կտրէ, դուք ինչու համար զօրա-
նոցը այրեցիք և զինուորները ջարդեցիք, Մեծերը ըսին,
ասի մենք ալ զխոհնք, բայց երբոր գերի զինուորները
Զէյթուն բերինք, երկու ամիսի չափ կերակրեցինք, յե-
տոյ մեծ պատերազմի սկսանք, երկրորդ օրը՝ Զէյթունի

մանր աղաքները և բոլոր ժողովուրդը պատերազմի դաշան էինք, գերիները կը տեսնեն որ Զէյթունի մէջ կնիկներէն զատ մարդ չի մնաց, իրենց դանաւած տեղը կրակի կուտան և փախչելու կը պատրաստուին, կնիկները կը տեսնեն որ զօրանոցէն մուխ կելլէ, կնիկները կը հաւաքուին կերթան կրակը կը մարեն և զինուորներն ալ կը ջարդեն, հիմա Զեպի կը հարցնենք որ յանցանքը որունն է, զօրանոցին այբուիլը ըսեա՛ Զէյթունցիքս մէջն էինք, մեծ բանակը եկաւ պաշարելով կրակիլ սկսաւ և Զէյթունցիք այբուիլ սկսանք, տեսանք որ ճար չի կայ մինք ալ ներսէն կրակիցինք ու ետեւի պղտիկ գռնէն փախանք: Հիւսպատարը ըսաւ, եղածը եղած է հիմա զօրանոցը առաջ ինչպէս էր նէ անոր պէս պիտի չինէք և ջարդուած զինուորներուն տուգանքը պիտի տաք, դրսուած թնդա՛ծօթները և զէնքերը ետ պիտի տաք, եթէ այս ըսածնիս ընդունիք ձեր հաշտութիւնը կը կնքենք, եթէ չընդունիք մինք կը քաշուինք և դուք նորէն պատերազմնոցէք ըսաւ, մեծերէն և ոչ մէկը պատասխանեց, Բարթողիմէոս վարդապետ թաղածեան՝ խօսք ասնելով ըսաւ, կը ներէք, Տէր իմ, եթէ մենք Զէյթունի բոլոր ստացուածքնիս ծախենք՝ առաջուան պէս զօրանոց մը չենք կրնար չինել, այնպէս զօրանոց մը չինելը կառավարութեան գործն է, զինուորաց տուգանքը ըսեա՛ նորէն չենք կրնար տալ, ինչու որ աղքատ ենք, արդէն մենք այսքան տարիներէ ի վեր թուրքիոյ հետ պատերազմ կընենք կամ յեղափոխութիւն կընենք պատճառը ի՛նչ է, կառավարութիւնը ժողովուրդը կը նեղէ տուրքի համար ժողովուրդն ալ աղքատ է չի կրնար վճարել ու կըմբոստանայ: Հիմա ճըշմարտութիւնն այս է. մենք ո՛չ զօրանոցը կրնանք չինել և ո՛չ ալ զինուորաց տուգանք կրնանք տալ, զէնք և

Թնդանօթ լսես՝ մեր արեան գինն է որ պատերազմելով
 ստամ հնք ու երբէք չհնք կրնար տալ, թէ որ այլապէս
 է դուք ետ քաշուեցէք մենք պատերազմելով կտուելով
 կը ջարդուինք. Ձեր աղատելիք հօգին թող Աստուած
 ազատէ ըսաւ : Բոլոր ժողովուրդն ալ ծանոթացելով,
 կեցցէ՛ Բարթողիմէոս վարդապետ պոռայցին. Հոն գանը-
 ւած հիւպատոսները, փաշաները և հրամանատարները այս
 խօսքին վրայ զարմանալով ըսին թէ՛ սա ինչպէս խօսք,
 և ինչպիսի համարձակութիւն ու ինչպիսի մարդիկ են ա-
 սանք. Այն ժամանակ անգլիոյ հիւպատոսը ըսաւ թէ՛ թո՛ղ
 ապրին Ձէյթունի ժողովուրդը : Ես արդէն փորձեցի թէ
 քաջ սիրտ և դեռ պատերազմի պիտի կրնան դիմանալ,
 անոր համար այսպէս խօսեցայ. զօրանացին այրուիլը և,
 գինւորներուն կտարուիլը թո՛ղ և բոսպոցիք մտածեն սա-
 կայն մեր սիրուն համար թնդանօթները և զէնքերը պի-
 տի տաք. Մեծերը ըսին թէ՛ չատ ըսաւ, Տէր խմ, Ձեր սի-
 բուն հաճար ոչ թէ թնդանօթ եւ զէնք՝ այլ մեր աղաք-
 ներն անգամ կը նուիրենք. սակայն զէնքերնիս սրտիս
 է, ինչու որ Ուշաղ-Տէտէ ըսուած լինը յիսուն հօգի մե-
 օան, Պէրզինկայի լիւր վաթսուն հօգի մեօան և զօրա-
 նացին մէջ հարիւր հօգի մեօան ասոնց բոլոր զէնքերը
 իրենք հաւաքեցին ըսելով, 150 զէնք և թնդանօթները
 տուինք ու հաշտուեցանք :

Այսքան տարիներէ ի վեր աչքի առջև բերէք, որ
 փոքրիկ Ձէյթուն մը որքան թիւրք գինւոր ոչնչացու-
 ցինք, այսու հանգերձ մենք չի պարծեցանք, որ քաղաք
 կամ ընկերութիւն մը կրնայ ըսել թէ՛ մենք Ձէյթունի
 ուժ կամ զէնք գրկեցինք, դարձեալ մենք պատերազմէն
 ետ չի քաշուելով սրտրաստութիւն կը տեսնէին : Կասա-
 վարութիւնն ալ գիտէր և մեծ աչքով կը նայէր Պուլրա-

րիայէն աւելի Չէյթունէն կը վախնար . որքան ալ զին-
 ւորի վախուստ տուինք դարձեալ ձայն չի հաննց . Միշտ
 կուզէր որ Չէյթունի հետ լաւ վարուէր , երբէք մեզի հետ
 թշնամանալ չէր ուզէր . մանաւանդ պատերազմի ժամա-
 նակ իր երկրին մէջ ժողովուրդը ըմբոստանայ , որովհե-
 տեւ լաւ գիտեր թէ՛ եթէ Չէյթունը ըմբոստանայ իրեն
 մեծ արդեւք պիտի ըլլար , անոնց կամքին կերթար :

Չէյթունի այս հանդարտ կացութիւնը շատ չտեսց ,
 Սիսի կաթողիկոսը իր մէկզմէկու յաջորդող կոնդակնու-
 ըովը կըսէր թէ՛ դուք էք պատճառը հայութեան Չարդը-
 ւելուն , դուք էք որ հայուն արիւնը կը խմէք , և ամ-
 բողջ հայութիւնը ձեր երեսէն վնասուեցան , չըլլայ որ
 պատերազմ ընէք : Մեծերը համոզեց չեզոքացուց :

1896 մարտ 6ին կառավարութիւնը հաստատեցին ա-
 ռաջուան պէս լաւ կանցնէինք , յետոյ Յուլիանաքի ա-
 նունով յոյն դայմազամ մը բերին ժողովուրդին աչքին
 լաւ երեսնալու համար , արդէն Ալի փաշան ալ սրտաե-
 րազմէն վերջն Չէյթուն մնաց ասի ալ Տէր կարապետ քա-
 հանայի հետ բարեկամացաւ , որ տեղւոյն Առաջնորդն էր ,
 բաւական ժամանակ Չէյթուն լաւ վիճակի մէջ մնաց , և
 հիւպատոսներէն՝ Աթէշ Մելքոն Քրանսայի հիւպատոսը ,
 Մարաշ մնաց կառավարութեան և ժողովուրդին մէջ թըշ-
 նամութիւնը վերնալու համար :

Եթէ Քրանսական հիւպատոսը Մարաշ չի մնար , վեց
 ամիս յետոյ նորէն մեծ կսիւ մը պիտի ծաղէր . սակայն
 հիւպատոսը ստաջըր ստաւ : Երկու տարիի չտի դայմա-
 զամ հիւպատոս մնացին . յետոյ կեսաբիոյ ինճէ-սու զիւ-
 ղէն Անտաթաս անունով յոյն դայմազամ մը և Ալի փա-
 շային տեղն ալ թաճարն պէյ անունով հրամանատար մը
 եկաւ : Այս մարդիկը երեք տարիի չտի մնացին , երկուքն
 ալ շատ զէշ էին :

Անասթաս դոյնադամը՝ միշտ մեծերը և ժողովուրդը մէկզմէկու կը ձգէր, խտանակիչ և անպիտան մարդ մ'էր. իսկ հրամանատարը ամեն ժամանակ կը մտածէր թէ՛ Զէյթունը ինչ տեսակէտով կառնուէր և անոնց գազանիքը հասկնալու կը ջանար :

Հրամանատար թանսին պէյը Սուլթան Համիտին գազանի կը գրէ թէ՛ 10 կամ 12 թաղուր զինուորով առանց ազմուկի Զէյթունը կը գրաւեմ: Այն ալ ուզածիդ պէս ըրէ՛ ատանց ինծի հարցնելու կը պատասխանէ :

Տէր կարապետի բարեկամ Ալի փաշան Հալէպի մէջ միւշիւր էր. օրին մէկը տեսանք որ զօրանոցը երեք թաղուր զօրք եկած է, 8-10 օր յետոյ երեք թաղուր ևս եկան, ամէն հինգ տասը օր անգամ մը երկու երեք թաղուր գալով ութը թաղուրի չափ եղաւ, ժողովուրդին կտակած առաւ այս զինուորին շատնալուն պատճառն ինչ պիտի ըլլար, ժողովուրդն սկսաւ իր սրտատատութիւնը տեսնել. Տէր կարապետին բարեկամը եղալ միւշիւր Ալի փաշան գազանի նամակ մը կը գրէ, որ ձեր զլխուն գալիք փորձանք մը կայ ճառը տեսէք: Տէր կարապետը նամակը ստածին պէս ձի կը հեծնէ և Մարաշ կերթայ Ֆրանսական հիւպատոսին հետ կը տեսնուի և կը վերագտնայ. առտու մնալ տեսանք որ զինուորը քաշուած և դաշած են և ոչ մէկը կրցաւ քան մը հասկնալ :

Սուլթան Համիտ շուտակալ կը գրէ հրամանատարին թէ՛ այս գազանիքը ուրիշ երեւան ելաւ: Հրամանատարն ալ կը պատասխանէ թէ՛ Հալէպի միւշիւր փաշան Տ. կարապետին բարեկամն էր և ան ալ լուր ունէր այս լսանէն կարծեմ ան իմացուցեր է: Սուլթան Համիտ Ալի փաշան Պօլիս կը կանչէ, Ալի փաշան ալ ինքզինքը կը թունաւորէ ու կը սատկի. հրամանատարն ալ թոքաղտ հիւան-

դու թննէն բռնուելով, ան ալ կը սասկի. և զօրանոցէն դուրս մեր տաք ջուրի ձամբան կը թաղեն, տղաքները ջերմուկ երթալու ժամանակ՝ գերեզմանին վրայ կը մատեն, ի պատիւ մեր դամանտանին ըսելով, հրամանատարին և միւշիր փաշային սասկիլը ութ օր տարբերութիւն ունեցաւ :

Ձէյթունի այս կացութիւնը՝ իրենց եղբայրսիրութեան և սէր միութեան գորութիւնն է, դայնագամը գնաց և հրամանատարը սասկեցաւ, բայց իրենց չոր սերմը մնաց մեծերուն քով ոչ եղբայրսիրութիւն ոչ ալ սէր միութիւն մնաց Ձէյթունի 5 թաղը և կողմ ելաւ և Աստուած ալ ձեռքը քաշեց եթէ պատերազմէինք, այսքան ժողովուրդ չպիտի կորսնցնէինք. հիմա ճակացուեցաւ թէ սէր միութիւն չեղած տեղն ինչ կըլլայ :

Ձէյթունցիք Հալէպի լիվային գրեցին թէ՛ մենք քրիստոնեակայ յոյն չենք ուզեր թիւրք կուզենք : Ասպրի սէյ անունով թիւրք դայնագամ մը եկաւ, երնք չարս աւիս յետոյ Մարթին շինողներուն գործիքներն ճաւաքեց, Չոլաքեան փանոս աղային տղուն խանութին մէջ Մարթին շինած ժամանակ ձեռքէն տտաւ և գինքը բանատարկել տուաւ, մեծ աղաները դային խնդրեցին որ այսպիսի գործերուն մի խանութիւր հաքը լաւ չըլլար. աղան թող տուր և գործիքներն ալ միտսին. եթէ փանոս աղան ինքը դայ այն տանն կաղատեմ, սորա թէ ոչ Մարաշ սկիտի զրկեմ կըսէ :

Չոլաքեան փանոս աղան միւս հինգ աղաքներովը և աղապահաններովը և ժողովուրդէն 25 հոգիով զխնուած և Մարթինով և փամիուչաով, կէսօրին կառավարութիւնը կոխեցին, և ամեն մէկը առիւծ կարեկով տանիքներուն վրայէն վարէն դայնագամին նշան կաննէին և կըսէին

ՀԱՐԱՆՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ Ի Ս Ո Ւ Դ Ի Կ Ա Մ 1935
Հ Ա Լ Ե Ց Բ Ր Գ
Հ. Ե. Մ

թէ՛ եթէ ազան չարձակէս քեզ կը սաստկեցնենք և զօրանոցն ալ պիտի գրաւենք. ժողովուրդն ալ խանութները կը փակեն և կը սրատրատուին:

Հրամանատարը եկող զինուորներուն և փանուս չափուշին՝ ինչ կեցէր էք շուա ըրէք ըսելով ամենքը փախան, Գայմազամը ճառահատեալ թող տուաւ ազան, մայրը քոյրերը որ հոն գրան տաջուր կայնած էին համբուրեցին հայրն ալ ճակատէն համբուրելով քաջուեցան լեռը: Այն գիշերը դարձեալ 30-40 կարիճներով կառավարութեան դուսը կոխելով բաւական զէնք սրարպեցին, և սկսան պոսալ, «կէ՛ք աւանակներ դայմազամ և զինուոր, որ է՛ք նէ դուքս կէ՛ք որ հասկնաք թէ՛ ի՞նչպէս կըլլայ քաջութիւնը՝ կառավարչատունէն մինչև զօրանոցը քառորդ ժամ հեռաւորութիւն ունի, պօռույով օգնութիւն ուղիցին, 30 զինուոր եւս եկաւ որ 100 եղաւ, բայց վախերնէն ո և է մէկը դուքս չկրցաւ ելլել՝

Գայմազամը այս խնդիրը լիմային կը գրէ, անկից Հաճի Բեապիւր անունով հրամանատար մը եկաւ: Չ թապալ գինուսով և լնոները ելլելով սկսեցին փնտտել, բայց չկրցան մէկը գտնել սկսան անցնող դարձողները շարչարեղ թէ՛ գուք տեղերնին գլտէք և չէք գուրցեր:

Չօլազեան փանոս ազան տեսնելով որ իրեն համար անցորդները կը նեղեն ու կը ծեծեն՝ իր ընկերներովը տուն եկաւ, լուր տուին թէ՛ Չօլազեան Փանոսը տունն է. հրամանատար Հաճի Բեապիւրը Մարաշի Բէամէճ օլլու Ալի չափուշը մէկ պէտլիք զինուոր աւանելով և իրենց առաջնորդ ունենալով Գասապ օլլու Սարգիսը և Ղազի Գրիգորը միասին փանոս ազային տունը պաշարեցին, ժամ մը կռուելէ վերջ Գասապ օլլու ժանտարման մեռաւ, փանոս ազայի կողմէն Խուլումանեան Տովլաթը մեռաւ:

Զինուորները վախցան թէ՛ Զէյթուն կը խառնուի, ինչու որ մեռնողներէն երկուքն ալ հայ էին և ետ քաշուեցան, իրենք ալ լիւր քաշուեցան :

Մեծերը հաւաքուելով Լիվային հեռագրեցին, գայմազամը պաշտօնանկ եղաւ և պաշտօնեայները փոխուեցան, Զօլաղեան փանոս ազան խանութը բացաւ, փանոս ազան 7 աղայ ունէր հինգը ամուսնացած երկուքը պղտիկ էին, ամենն ալ Մարթին կը շինէին :

Պայրամ Ֆէհմի անուևով գայմազամ մը եկաւ, այս մարդը գալուն պէս Նազարէթ չափուշին հետ բարեկամացաւ և Շէֆթէլի վարդեպար անուևով յեղափոխական մը հանեցին, ասի գիւղերը կերթար սուրք կը հաւաքէր և ճամբորդները կը կողոպտէր, և կառավարութեան բողոքողները կը վճատուէին, որովհետև այս երեքը ընկերութիւն մը կազմած էին և երեքը մէկահոլ կուտէին, սասնց նայելով 30 հոգի ևս երան մէջտեղ, ամէն կողմ կը թալանէին կը կողոպտէին. Նազարէթ չափուշը Պէլէտիյէ րէյխի եղաւ և իրենց կողոպուտը կառավարութեան հետ կը բամնէին, թէև մեծերը բողոքեցին, բայց բան մը չի կրցան ընել : Վերջապէս գայմազամը պաշտօնանկ եղաւ :

Շաքիր պէյ անուևով գայմազամ մը եկաւ, այն ժամանակները յեղափոխականները սկսան շուկան ու փողոցները պատիլ և պաշտօնեայներու, բօլիս ու քովաթիւններու հետ սուրճ օղի խմելով ու բախութիւն ընել և կառավարութեան գտան առջևին առանց վախու անց ու դարձ կընէին, օրին մէկը Միւֆթին քովս եկաւ և ըսաւ թէ՛ խօսէ ատոնց, որ կէսօրին կառավարութեան առջև էն թող չանցնին կառավարութեան պատիւ չի բերէր :

Յանկարձ ընդհանուր պատերազմ հրատարակուեցաւ, Զէյթունի ամեն հպատակ գիւղերէն, գայմազամըղներէն

Անտըրըն , Ալպիսթանի մէջէն և գիւղերէն վիճիգա ասնելու կուգային և Անտըրըն գայմագամլըզէն 40 հոգիի մը չափ եկած ատեննին ամեկիով ասոնց մօրուքը կը կտրեն , և լաւ մը ձեծելէն յետոյ թող կուտան . Ասոնք ճամբայէն ետ դառնալով լալով Մարաշ կերթան և պուսալով կը բողոքեն թէ՛ «տաքութիւնը անցաւ՝ այսպէս է մեր կրօնքը կեալուրները մեզ ասանկ ըրին» :

Մարաշէն Հայտար փաշան թապուր մը զինուորով և կաւ գօրանոցը նստեցաւ , մեծերը բարի գալուստի գացին , հետեւեալ օրը կառավարութեան եկաւ և մեծերը ստջեւը կանչեց և ըսաւ , աղանե՛ր չէք ամէնար , ըրածնիդ անքաղաքավարութիւն է կը տեսնէք այդ աղքատներուն վիճակը . մեծերը ըսին՝ մենք ինչ ընենք , կառավարութիւնը և Նաղարէթ չալուչը այս վիճակին բերին . փաշան կըծէ թէ՛ տեսէք աղաներ այսպիսի գէշ մարդիկէերը թէ՛ կառավարութեան և թէ՛ ձեզի պատիւ չի բերեր , պէտք է հեռացուին : Եղածը անցած է , ձեր յեղատիտականները առէք և ձեզի երբէք չդպչելով պիտի թողում , լաւ գիտեմ որ դուք ալ այսպիսի գէշ մարդիկները չէք ուզէր և մեծերն ալ շատ լաւ ըսելով Ս . Ստոււածամնայ եկեղեցւոյն սենեակը ժողովք մը ըրին Սուրէնեան Պապ ազան կը հարցնէ՝ Փաշան մեզմէ յեղատիտականները կուզէ տանց թէ՛ չէ՛ : Նաղարէթ չալուչ ըսաւ թէ՛ ինծի մնայ նէ չպիտի տաք վերջը լաւ չըլլար : Պատճառը հարցուց կարապետ էֆէնտին , ի՞նչու չես տար , ի՞նչ կընես , կուզեն :

— Նաղարէթ չալուչ ըսաւ թէ՛ աղանե՛ր ասոր պէս շատ փաշաներ տեսած ենք , դուք հիմա ետեւէս եկէք տեսէք զայն ենչպէս ետ կը զրկեմ , ստուղիւ եթէ Նաղարէթ չալուչին խօսքին կարեւորութիւն տային՝ կը յաջողէին , սակայն աղաները արդէն այս օրին կապատէին որ Նաղա-

բէթ չափուշը ձգել : Պաշտօնս կարապետ Էֆէնտին Տաշ-
եան Յակօբ Էֆէնտին Սուրէնեան Պատարղան Էֆէնտին ե-
րեքը մէկէն ըսին թէ՛ Նաղարէթ չափուշ չի բաւեր այս-
բան խայտարակութիւնն : քաշածնիս կը բաւէ, այս յե-
ղափոխականները մեր գլխին փորձանք են, տտոնք պէտք
է որ կառավարութեան յանձնենք, և չի յանձնուողն ալ
պէտք է նուայնենք :

— Նաղարէթ չափուշ ըսաւ թէ՛ գիտեմ որ այս փոր-
ձանքը վերջապէս գլխիս պայթի : առն կերթայ եղբայրը
Պոպիկ աղան, աղան և Աւետիս աղան (ասի ալ յեղափո-
խականներուն հետն էր) տտոնք կառնէ կառավարութեան
կը յանձնէ, և ըսաւ թէ՛ իմ եղբօր աղան գլխիս կը դառ-
նէիք ես բերի, դուք ալ ձեր մարդիկը բերէք : միծերն
ամէն մէկը իր թաղին յեղափոխականները համոզելով բերին
յանձնեցին, տտոնք առածին պէս՝ կըսէ թէ՛ Չօլագեան
Փանոս աղա անուանով մարդ մը կայ եղիւր անի թող իմ
քովս դոյ բան մը չպիտի ընեմ, քիչ մը պիտի խօսակ-
ցիմ, և միծերը Փանոս աղան համոզեցին տարին ըսելով
թէ՛ մենք քեզ ետ կառնենք :

Փանոս աղան փաշային քովը կերթայ և մէյմէկ սուրճ
խմելէ յետոյ փաշան կըսէ թէ՛ դուն ի՞նչու կառավարու-
թենէն կը փախչիս, դուն կառավարութեան վայելող մարդ
մ'ես և թող կուտայ : Երկու օր յետոյ նորէն կը կանչէ
երկու աղաքներն Յովսէփն Աբրահամն ալ միասին տես-
նել կուղիմ ըսելով երեքն ալ բանտարկել կուտայ : փա-
նոսին միւս մարդիկներն ալ որ առաջուք օր կարած էիդ
տտոնք ալ բանտարկել կուտայ :

Նաղարէթ չափուշ Եէնի տիւնեա Եղիա աղան տունը
կանչել կուտայ : — Եղիա աղա եթէ մենք երկուքնիս մէկ
ըլլանք հազար հատի շափ ղէնք ըսնողներ կուսնանք,

Այս գիշեր դորանոցը կոխենք. այս բաները խորհած մի-
ջողնին՝ Ասլանեան Հայի էֆէնտին վրայ կուգայ, այս
մարդը Նազարէթ չափուչին աղզականն է և Նազարէթ չա-
փուչին պէլէտիյէ բէյիսի հղած ատեն անդամակիցն էր,
և ամեն ժամանակ երկուքին խօսքը մէկ կըլար: Կէս գի-
շերին Հայտար փաշային կերթայ և լուր կուտայ թէ՛ Եւ-
նի աիւնեան՝ Եղիա ազային հետ որոշեցին որ հազար հոգեով
տառալարութիւնը պիտի կոխեն, և ես այս խօսակցութեան
կ'ըրայ հասայ:

Առաւօտուն Նազար չափուչը, Եղիա ազան և Յակոբ
էֆ. բանասարկեցին և հարիւրական գտազան գառնիլէ վերջ
ձիերու ախտը նետել տուա քիչ յետոյ Յակոբ էֆէնտին
թող կուտայ Նազարէթ չափուչը չձգեց ամենը 75 հողի ըւ-
լալով կառավարութեան յանձնուեցան, փաշան ըստ թէ՛
ազաներ շատ շնորհակալ եղայ ձեզի՛ք՝ եթէ զէնքերնիւ ալ
տաք ալ աւելի շնորհակալ պիտի ըլլամ գծուարնուք չի
գայ ետքէն աղօթք պիտի բնէք ինձի: Մեծերը ըսին թէ
էֆէնտիմ այնպէս բանիլ պէտք եղող զէնք չունինք ուզես
նէ տանք, ամենը կայծ քարով շինուած և քիչ մ'ալ վեց
հարուածեանս: Փաշան ըստ մնաս չունի ինչ որ կուզէ թող
ըլլայ: հազար հրացան և վեց հարուածները լերին յանձ-
նեցին ուրիշ չմնաց ըսին: Փաշան գրպանէն տետրակ մը հա-
նելով որոնց քով մարթին կայ անուանին կարդաց, այս
ինչ մարդը թող գայ, այն մարդը երթայ, խնտալով կըռէ
քու քով երկու կամ երեք մարթին կայ բերես նէ լա-
կըլլայ չէ նէ վերջդ զէն կըլլայ դուն գիտես, բերողին չը-
նորակալ եմ ըսելով թող կուտար, չունիմ ըողին՝ պար-
կեցուցէ՛ք կըսէր, և կսկսէր խարազանի հարուածներ տալ
անհամար, աման էֆէնտիմ երթամ բերեմ ըսես նէ թող
կուտայ: Ասանկով հաւաքեց հազարի չափ մարթին, Նա-
զարէթ չափուչին տան պատուհանին մէջէն Գ հատ, Գու-

լազիան փամոս աղային սան պատին մէջէն 7, Չօլազիան Մեսրոպ աղային տունէն 7, Թէամէքէր փանոսէն 4, 2 ալ ուրիշէ մը՝ ոմանց համար ալ անիրաւ տեղը չունեցած ատեննին մտանած են թէ՛ մարթին ունի, ան ալ գտազանի վախէն ուրիշ տեղէն կը գնէր կը բերեր :

150 թապուր գլնւոր եկաւ, երբէք այսքան չի վեասուեցանք, արդեօք այս մէկ թապուրէն վախցանք, գործերը այս վրձակին հասնելուն պատճառը կաթողիկոսին կոնդակները և մնակուն մէկզմէկ իյնալն է, որ այս փորձանքներուն ենթարկուեցանք : Հայտար փաշան՝ 2000ի չափ զէնք 75 հատ ալ կարծ առնելով Մարաշ գնաց, 15 օր վերջը Նազարէթ չափուչը լանալին՝ մէջ թունաւորեց՝ 5 6 ամիսէն եզկիլէլիան Նշան էֆ, և Եսպուպիան իյաչիկ էֆ. Չազրեան փամոս ազան՝ մի քանի հոգի ևս վերագառձան, բարի գալուստի դացինք, Նազարէթ չափուչին թունաւորուելուն խօսքը բացին, որ ազգիտ կողմանէ մեռելը մեծ հանգիստով թաղեր են :

Երկու ամիս անցնելէ վերջ, կառավարութիւնը Զէյթունի գլնւորներուն և ժանտարմաներուն Մաւղէրները հաւաքեց և անոնց տեղ հին Մաւղերներ տուաւ և ետրերը անատւինները լեցնելով պատերազմի դաշտը զրկել ուղեց, Դաշնակցական և Հնչակեան կուսակցականները Պարութճի եզկիլէլ աղային առնը հաւաքուեցան զիշերուան ժամը 3ին (ըստ թրքաց) սկսան խորհրդակցիլ, որ այս զէնքերը չտանք յետոյ կը վաասուինք, ինչ պիտի ընենք զիշերով թէլէֆօնը պիտի կարենք, առանց զէնք նետելու 80 հոգի սուրերնիս քաշելով պէտք է որ կառավարութիւնը կոխենք այն ատեն առանց սղմուկի կառնենք, կառավարութիւն մէջ 50 հոգի ժանտարմա մայ անոնք ալ չեն կրնար զխմազրիկ և շատերն ալ դուրս են մինչև որ լսեն մենք զանոնք կառնենք : 80 հոգի հաւաքուեցան երգում ըրին թէ՛ այս բանէս դուրս չպիտի ելլենք, նստեցան զիշերուան մինչև ժամը

եօթը : Մէջերնէն⁷ հոգի ընկերութենէն դուրս հանեցինք ինչու որ անկարող էին ստոնք գացին, Մորոսեան իջիր աղա տունը կերթայ կինը կարթնցնէ՝ կըսէ թէ՛ աղաքնի-րը կատախարութիւնը պիտի կոխեն վազը դուրս չենք նար հլլիլ ըսելով զխնացի աղբիւրէն ջուր քաշել կուտայ և ինքն ալ Պսպ աղային տունը կերթայ և կըսէ, Պսպ աղան գայմագամին կերթայ լուր կուտայ, գայմագամը զօրանացէն 200ի չափ զինուոր բերնել կուտայ պահպանու-թեան համար : մեզի ալ լուր արուեցաւ դրսէն թէ՛ վա-խէ՛ք ինչու որ ձեր ըբած խորհուրդը կատախարութեան խնացուցին, զօրանացէն զինուոր բերին և ժանտարմաները կը պահեն կատախարութիւնը :

Հետեւեալ ասուտուուն զէնքերը պահակներով Մարաշ զրկեցին : կատախարութիւնը Սուբէնեան⁸ Պսպ աղան կան-չել տուաւ և հարցուց՝ դուն ի՞նչէն հանեցար թէ՛ կատա-վարութիւնը պիտի կոխեն և զէնքերը պիտի գրաւեն, Պսպ աղան ալ ըսաւ թէ՛ ես տունս կը նստէի և ոչ մէկ ըսնէ տեղեկութիւն ունէի, զիչերը ժամը 5ին Մորոսեան իջաչերը եկաւ ըսաւ թէ՛ Պարութեան Եզեկիէլ աղային զացի աչպէս խորհուրդ մը կայ, լուր ունենանք, ես ալ եկայ խնացուցի : շատ լաւ ըսաւ գայմագամը և հրաման ըրաւ, որ Մորոսեան իջաչերը կանչեն : իջաչի աղան ե-կաւ, Գայմագամը հարցուց՝ զիչերուան ժամը 5ին Պսպ աղային տունը ի՞նչու գացիր, լաւ նայիմ ի՞նչ տեսար և խնացար : Էֆէնտիմ, մենք Պարութեան Եզեկիէլ էֆէն-տիին գրացի ենք, տունը գացի : Զօլազեան Մերոսոյ, Մէլտոնեան կարազիա և իլի Գէորգ ութը տասը հոգիի չափ նստած էին, ես ալ գացի նստեցայ, խօսակցութեան ժամանակ՝ Զօլազեան Մերոսոյ աղան ըսաւ թէ՛ աղաքնի, եկէ՛ք այժ կատախարութեան մէջ գտնուած զէնքերը չի

ձգենք որ զրկեն, յարձակինք և գրաւենք: Մեկտոննան կարապետը ըսաւ, ճիշդ է շատ լաւ կըլլայ, մարդ զրկեցին Փանոս աղան, տղան, Էմմանուէլ չավուշ, Սինկէրեան Փարթամ եղբայրը Նազարէթ, Թաթոսեան Նշան, Եէնի Տիւնեա Նշան աղան հաւաքուեցան և եկող միւս բազմութիւնն ալ՝ որ ութսուներեք չափ կուղային ըսին թէ՛ գիշերը ժամը 7ին կառավարութիւնը պիտի կոխենք լուր ունեցէք և պատրաստ գտնուեցէք, ներկայ գտնուողները երգում ըրին որ թէլէֆօնը պէտք է կոտորուի և զէնքերը գրաւուի, 80 հոգի սուրերը քաշելով զէնք չի նետած կառավարութիւնը պիտի կոխենք: Եո ալ առանց հասկցնելու դաղանի գացի Պապ աղային լուր տուի. յետոյ Պարութեան Նշանը կանչեցին, Սինկէրեան Փարթամը եղբայրը Նազարէթ, Թաթոսեան Նշանը, Սինկէրեան Սարգիսը, Վարդելարը, Աւագեան Օհաննէս, Պարոնեան Նազարէթ աղան, Տ. Մեսրոպեան Գալուստ աղաները,

Պօղ-Օղլու, Ստեփան Նշան և Հայկը, Աղջիկ-Օղլու Արթինը, Վարպետ Մանուկը, Սէթեան Առատուր, Բէլլիքեան կարապետ, Մորոսեան իյոչերը, ասոնք ձերբակալեցին Մարաշի բանտը զրկեցին. լիւրը ելողները Չազրեան Փանոս աղա, Էմմանուէլ չավուշ, Նազարէթ Վարդելար, Արթին Եէնի Տիւնեա, Նշան աղա եղբայրը կարապետ, Եղիա աղան 4 զաւակներովք, Չոլազեան Մեսրոպ, 2 եղբայրը Արամ Կարեպին, Մեկտոննան կարապետ եղբայրը Սարգիս, Լեւոն Ահարոնեան, Պարոնեան Ստեփան, Ատուրեան Լեւոն Արիսեան Օհաննէս, այս կըտորի՞ներն 50 հոգի ըլլալով լիւր ելան: Եէնի Տիւնեա Նշան Չազրեան Փանոս, Չոլազեան Մեսրոպ աղաները, երեքը երեք կողմ եղան, Եէնի Տիւնեա Եղիա, Նշան և կարապետ աղաները, Զէյթունէն կէս ժամ հեռաւորութեամբ վանք մ'ունինք, որ 120 տունէ կը բաղկանայ և Եղիա աղային ձեռքին տակն է վանքին Առննապետն ալ ինքն է,

ինքն է, ագարակները այգիները, կենդանիները և բոլոր տաացուածքները բանավիները իրեն ձեռքն էր: Ասոնք վանքին մէջ տեղաւորուեցան, Հնչակեան և Դրօշակեան կուսակցականները վանքին դմբէթին վրայ 200ի չտի դրօշակ տնկեցին, 100ի չափ Հնչակեան և 200ի չափ Դաշնակցականներէն եկան լեցուեցան վանքը, Զէյթունէն մեծերը եկան թէ՛ վանքը պիտի փակեն և մեզի դուրս պիտի հանեն. անոնց ամենն ալ վռնտեցինք. վանքը ազգին ըստացուածքն է և ազգը ես եմ ըսաւ. Եղիա աղան, ինչու որ 1895ի պատերազմին վանքը աղատողը Եղիա աղան էր: Գալով միւս խումբերուն պետերէն Չազրեան փանոս և Չօլագեան Մեսրոպաղաները իրենց հետ ունենալով 50ական հողի, կը տեսնէն որ 25 ժամտարմա Մարաշէն կուղան, ասոնց դէմը կելլեն 15ը կսպաննին և մնացածները կը փախչին, Մեսրոպին խումբը 2 զինուոր կը տեսնեն զէնքերնին կառնեն ականջնին կը կտրեն և թող կուտան: Եէնի Տիւնեա Նշան աղան հեռադիրը կը կտորէ վանքին կողմէն, 2 ժամուան մէջ աշխարհը տակն ու վրայ քրին՝ ժողովուրդը սխաւ պատրաստութիւն տեսնել, ոտքխաման կարել, կապար թափել, փամփուշտ և վառօղ շինել և լն. և շուտ մը զօրանոցը պիտի կոխէին:

Ազաները Ս. Աստուածամին եկեղեցին ժողովք քրին, վրձաբանութեան ժամանակին՝ գայմազամը և հրամանաւորը հոն եկան, գայմազամը լալով լըտաւ թէ՛ անաւասիկ զօրանոցին և կառավարութեան բանավիները, աղաներուն վրան նետեց և լալով ըսաւ. ազաններ ես գիտեմ որ Զէյթուն 250 թապուր զինուորի զէմ դրած է. ես ձեզ հետ ութը ինը հարիւր զինուորով պատերազմ չեմ կրնար ընել, հոս կենալու կը վախնամ կառավարութիւնը Մարաշ պիտի քաշեմ: Ազաները պատասխանեցին թէ՛

զայնագամ պէյ մի վախնար մենք մեռնինք նէ՛ դուն ալ
սասկէ սատր գործը մենք կը տեսնենք . սակայն հեռագիրը
կտարած և փութան փակուած է , մարդ չի համարձակիր
երթալու , 15 ժանտարմա սատկած անոնց դիակները բն-
քող չի կայ և ոչ մէկը դուրս կրնայ ելլել , կը զսոսնեն :
Այն թուշուն բանող կառավարութիւնն հիմա մուկին ծա-
կը մտաւ : Չորս թաղերէն 4 քահանայ մի քանի մարդիկ
8-10 շորի առին գացին ամեն 2 դիակը մէկ բնու ըրին և
հառավարութեան դուռը բերին ձգեցին : Հիմա կտրիճ կայ
նէ թո՛ղ երթայ կապէ հեռագիրը . զինուորներէն և ժան-
տարմայէն ո՛վ կերթայ դուրսը : Նորէն 4 թաղին աղանե-
րը և քահանաները գացին կապեցին հեռագիրը , Հեռագիրը
նորէն կտարուեցաւ . 7 օր մէկ կողմէն կը կապուի միւս
կողմէն կը կտարուի . յետոյ 9էյթուսցիք երկու մարդու
օրական տուին զիչերանց Մարաշ բոսթա տարին . 20 օր
յետոյ 6 թաղուր զինուոր Գերման հրամանատար մը և
մէկ Ֆէրիզ փաշայով եկան : Չազրեան Փանոս , Նշան ,
Եղիա և Մեսրոպ աղաները վանքին վրայ դրօշակ մը բա-
ցին . վանքը և զօրանացը դէմ առ դէմ է ու քառորդ ժամ
միջոց ունի , Գերման հրամանատարը Միւշիբ փաշան 9էյ-
թունի աղաները կանչեցին և ըսին , պատերազմ կուղէք
ի՛նչ է միտքերնիդ , աղաները չէ ըսին , չէ նէ ի՛նչու
ժանտարմաները սպաննեցիք և հեռագիրը կտարեցիք , զի-
տէք թէ հեռագիր կտարելը ի՞նչ է , հեռագիր կտարելը կա-
ռավարութեան լեզուն կտրել է . աղաները ըսին թէ՛ Տէր
իմ , առ բաները երբէք չենք ընդունիր , մենք մեր գործը
զիտենք : Անոնք յիղատխտականներ և գէշ մարդիկներեն ,
որ քաղաքէն դուրս հանեցինք , անուասիկ վանքն են ,
կտարէ Չարգէ ինչ որ կուզես ըրէ , մենք չենք հակառա-
կիր , հաւատացէք որ եթէ կուղէք սէճեհ տանք , մենք այլ-



պիտի գէշ մտադիկ չենք ուզեր ըսելով սեփեցկուտան, և ամէնքը կը բաժնուին :

Ժողովուրդին Յ մասը պատերազմ ուղող կողմն էին, Սուրէնեան Պոպ ազան շուկան ելլելով մունէտիկի պէս սփռաց, լսեցէք ժողովուրդ, մենք կառավարութեան սեփեց տուինք, պատերազմ չպիտի ընենք, վանքին վրայ զինուոր պիտի քալէ և պատերազմ պիտի ըլլայ, ով որ պատերազմ կուղէ թող ղէնքը ստնէ և վանքը երթայ, ետքը մի ըսէք թէ՛ աղաները վտասկ կամ խսամազ են, Զէյթունի մէջէն ղէնք չպիտի նետուի, Ժողովուրդը չպիտի խառնուի՝ ով որ խառնուի կառավարութեան լուր պիտի տանք: Վանքին մեր լրտեսը քաղաքէն լուր բերաւ թէ՛ ժողովուրդը և կառավարութիւնը խօսքը մէկ ըրին և հիմա Զէյթուն երկուքի բաժնուեցաւ, մէկզմէկ պիտի իյնան: Վանքը դանուողները խորհուրդ ըրինք թէ՛ գիշերը ժամը ճին Զէյթուն իջնենք և ամէն կողմէն կրակի տանք և Զէնք կը նետենք և գորանոցէն թնդանօթները Զէյթուն կը գարձնեն և ամենքս մենք կըլլանք, Խօսակցութիւննիս աղաները կը լսեն կերթան հրամանատարին լուր կուտան, յեղատիտիականները գիշերով պիտի գան Զէյթունը պիտի խառնեն: Հրամանատարը ըսաւ թէ՛ ինչ պիտի ընենք աղաներ: Մեզի 400ի չափ զինուոր կուտաք 2-300 ալ մեր ժողովուրդէն գիշերով Պոլինձէլիաչ քարին առջև կը պոճենք, գալու ըլլան դէմ կը կենանք կը սրտերազմինք և քաղաքը չենք մտցնել գիրենք, եթէ քաղաք մտնան՝ ժողովուրդն ալ կը խառնուի և վերջը շատ գէշ կըլլայ: Հրամանատարը 400 զինուոր կուտայ, 300ի չափ ալ ժողովուրդէն առին Զէյթուն մտնուելիք ճամբաները քունեցին գիշերով: Կէս գիշերին յեղատիտիականները Խաչ-Քարի կողմէն յարձակում ըրին, զինուորներէն

Յը սատկեցան և իրենցմէ վարդեվար անունով տղայ մը մեռաւ ու ժողովուրդէն 5 հոգի զառնուեցաւ, Տ Գալուստեան Գրիգոր վիրաւոր փախաւ աղասեցաւ երկու ժամ պատերազմելէ վերջ քաղաք չկրցանք մտնել հարկադրուեցանք վանք քաշուելու :

Առաւօտուն կանուխ 3 թափուր զինուոր, 2 լեռան թնդանօթ և 2 մեծ թնդանօթով վանքը պաշարեցին և սկըսան կրակ ընել . Սիւլէյման պէյ հազարապետը խօսք կուտայ Գերման հրամանատարին և Ֆէրիզ փաշային թէ՛ 3 ժամուան մէջ վանքը պիտի գրաւէ և մէջինները պիտի կոտորէ, ժամը 6 եղաւ չկրցաւ առնել . Գերման հրամանատարը կը բարկանայ և կը կանչէ Սիւլէյման պէյը ու կըսէ, դուն վանքը 3 ժամէն պիտի առնէիր 6 ժամ եղաւ դեռ ի՞նչ կընես, լաւ դիտցիր որ զուխդ պիտի երթայ . հազարապետին սիրտը կը կրակէ յանկարծ 1000 հոգի ևս կտոնէ, 4 թէնէքէ կազ և իւղոս խանձեր մէկ յարձակումով վանքին դուռը կերթան, Տղաքները ետեւի դուռնէն պատերազմ կընեն և դրան առջեւի կողմէն պատերազմ չէին ընել, ժողովուրդը տանիքներուն վրայնտատած կը խնտան, ոմանք ալ Ատուած դուն ազատէ ըսելով կուլան ու կողբան, վանքին դուռը Ատուրեան Լեւոն անունով մէկը պահակ էր, կսկսի պոռալ հասէ՛ք վանքը պիտի այրեն, տղաքները անաղին յարձակում մը ըրին, Սիւլէյման հազարապետ զարնուեցաւ սատկեցաւ . 1500 զինուոր կոտորելէն յետոյ, հազարապետին դուռը Շէֆթէլեան Արթին կառնէ և դուռնտազլը մալզէրը Մելտոնեան կարապետը առաւ և դիտակը Չոլագեան Արամը առաւ, Ասոր համար է որ Զէյթունին անունը Սիւլէյմանիցէ դրին, իրիկուն եղաւ զինուորը ետ քաշուեցաւ : Աղաները լուր կը զրկեն դորանոցը թէ զինուորը ետ մի քաշէք :

ետքը վանքին յիզատրխականները կը փախչին, նորէն մեր զլուխը պիտի ցաւցնէք՝ այս կէսօրին էր որ թնդանօթի ուումը և հրացանի գնտակ կը տեղար վանքին վրայ, զինուորը յարձակեցաւ վանքին դուռը աղաքներուն հետ մէկ տեղուեցան, ամէն կողմէն կրակ կըլլայ աղաները նստած կը նային և չեն ըսեր թէ՛ ժողովուրդ ի՞նչու էք կայներ, մի կայնիք ըսէին նէ, կես ժամուան մէջ 6 թապուր զինուորը 6 հողի կիջեցնէինք:

Բարթուղիմէոս վարդապետը մէկ երկու դասթ գինի խմելով զլուխը կը տաքցուցած ձիուն վրայ նստած Ս. Սարգիսի պէս հասաւ, ըսաւ թէ՛ Աստուծմէ չի վախցող աղաներ և ժողովուրդ, ի՞նչպիսի մարդիկ էք դուք, կը տեսնէք տղոցը վիճակը անոնք ալ մեր եղբայրները և մեր արեւակիցներն են պիտի ոչնչանան զեռ ի՞նչու կըսպատէք: Սուրէնեան Պապ աղան ըսաւ թէ՛ Բարթուղիմէոս Բարթուղիմէոս, խելքդ զլուխդ հաւաքէ, ի՞նչ կը խօսիս, վար իջիր ու կաթաղիկուտէն եկող կոնդակները կարգայ ու տես ի՞նչ կը գրէ, Բարթուղիմէոս վարդապետը լալով և բարձր ձայնով ըսաւ թէ՛ Պապ աղա՛, Պապ աղա՛, կաթողիկոսին կոնդակները այս պահուս չի կարդացուիր, կաթուղիկոսն ալ դուք ալ Ձէյթունին կործանութիւն պատասխանատուներն էք: Պապ աղան երաւ ձիուն զլուխը բռնեց Բարթուղիմէոս իջիր նայէ՛, իջիր սուրճ մը խմէ ու խելքդ զլուխդ ցայ, Յրնուդէն Ձէյթուն 6 ժամ է, 3 ժամէն եկած ես: Թո՛ղ տուր Պապ աղա՛. ես սուրճ խմելու չեկայ, ձիւդ ըսէ՛ք ի՞նչ կատասէք, պիտի պատերազմիկ թէ՛ ո՛չ, Պապ աղան ըսաւ թէ՛, նայէ Բարթուղիմէոս մինչև հիմա Յերդ, պատերազմն է, մեզմէ ուրիշ չկայ տեղ մը որ ՅՅ անգամ պատերազմի, ազդին արմարը մենք ենք նէ կը բաւէ, այս անգամ ալ թո՛ղ ուրիշներ ընեն մենք ալ հանպիստ ընենք, բոլոր ազգին արգելք

չըլանք : Բարթոլոմէոս կրթէք ձիէն չիջաւ լալով ողբա-
լով ելաւ դնաց : (*)

Իրիկունս կզաւ, Զէյթունէն 200 հոգի կըանք վանքին
օգնութեան կիրթայինք . Խաչ Բարի քովը հասնելնուս,
սեսանք որ վանքը եզոյ աղաքները վերէն վար կուգան

(*) Զէյրուցի եկեղեցականներու մեջ եւս ելած են
անձնանուէր հայրենաստերնէր, որոնցմէ հռչակաւորն է իր
բազազարժուրքիւններով Տ. Օհան Բանանան կամ (Տէլի Գե-
շիւ) դիւցազկը : Աստ օրով եզիպսոսի աշխարհակալ Մե-
նեմէն Ալի փաւայի որդին Խաչահիմ փաւան (որուն ար-
ձանը Քանիք Օսերայի հրապարակն է) Անասօլուի զանա-
զան մասերուն իրելէն յետոյ, չհասարձակեցաւ Զէյրուցի
նուանել : Ասի ի սկզբան սիրով զնաց հայ լեռնականաց
հետ եւ (Տէլի Գեշիւ) ի մեջը բանկազին սուր մը կապեն
բանլով քէ՛ Սուլթան Մանուս Բեզի խաչ սուր է, եւ
ալ Բեզի սուր կուտամ, ըս հարկին գործածես երբեմն մին
երբեմն միւր : Յետոյ փաւան մաննեսականներէ դրդեալ
որոնց արձանէ Զէյրուցի վրայ . սակայն (Տէլի Գեշիւ)
իւ կտրիներով դիւցազկական եւ արիւնանեղ պատերազմի
մը դիմադրելով, հարկազուեցաւ փաւան ամօրալից եւ
բաւալի :

1878 Տարւոյ հոկտեմբեր ամսոյ սկիզբը Զէյրուցի վրայ
կուգայ վեյսի փաւան մեծ բանակով : Յոնուզի վանա-
հայր Նիկողայոս եպիսկոպոսի առաջնորդութեամբ խաւք
մը հայեր կը դիմադրեն օսմ. զինուորներուն, Այս միջոցին
հայ իշխան Պապիկ փաւան 400ի չափ կտրիներովը ան
ալ սկսաւ պատերազմիլ, կուրին միջոցին դաւով մը 300
հոգի կը ձերբակալուին որոնց մեջ էր նաեւ Նիկողայոս
եպիսկոպոսը : Բ. Իւուր Անգլիոյ ղեկավարին եւ Պատրի-
արհարանին պահանջմանքը համակերպելով . ազատ արձա-
կեց զանոն :

ամեն մէկը կրցածնին չափ հրացան փամփուշտ կը բերեն, հոն դիմաւորեցինք և նստեցանք, Չագրեան Գէորդ ազան ըսաւ թէ՛ ինչու կուզաք շուտ ըրէք ետ դառնանք: Փանոս ազան . կորսուեցէ՛ք շուներ կոյր էիք առաւօտս ընէ ի վեր դու խնուս կրակ կը թափի, աչքս հտեւս կը նայիմ թէ՛ Զէյթունէն օգնութիւն պիտի գայ, առտուրնէ ի վեր ո՛չ հաց, ո՛չ ջուր, ո՛չ սիկարա, բերաննիս բան մը չենք գրած: Եղբայր, թող շտուաւ որ միտքերնիս բան դար: Տղաքներ բարկութենէս ինքզինքս պիտի մեռցնեմ, դուք ազգակից և հայ ազգական չէք, մարդ չէք, ձեր քով երբէք արիւն չկայ: ասկէ ետքը ետ ալ երթամ պիտի տաճկին հետ պիտի ըլլամ ձեզ պիտի գտնեմ, տաճիկները թո՛ղ ազաներուն կնիկները և ազջիկները բռնարարեն:

Գէորդ ազան ըսաւ թէ՛ շեաս չունի փանոս ազա թէ՛ որ երկու հարիւր մարդ եկաւ և 500 ալ դուք էք, կըլլայ 700, կուզէ նէ ժողովուրդը երբէք չխտանուի: Եղիա ազան պատասխանեց, Հաճի մէկ անգամ դեռ վանքը տես, վանքը քայքայուեցաւ հոն չի կեցուիր, տես քեզ կը հարցընեմ 50 հողի փարթող քարը ելլէ՛յիք նէ վանքը թնդանօթի չէին կրնար բռնել


36 անգամ պատերազմ եղած է 700 տարուան վանքը թնդանօթի ուռմբ մը չէ ինկած: 1895ին պատերազմին պէս եղածը չի կայ, նորէն ուռմբ մը անգամ չկրցան նստել վանքը ազատողը այդ փարթող քարն է, ինչ որ է անցուցինք: Զօլագիան Մեսրոպ ազա ըսաւ թէ՛ մենք չենք երթար, ով որ կուզէ երթայ. եթէ դուք գործ տեսնել կուզէք, 200 հողի գաղէք վանքին տուելի կողմը շատ գիտկներ կան գէնքերը հաւաքեցէք, քէմէրնին ալ նայեցէք, անաւասիկ ես 75 ոսկի գողկի և դուք ալ շատ ըստակ կը գտնաք, դացին շատ մը գէնք և փամփուշտ բերին,

Աստուծոս եղաւ տղաքները լեռը ելան, զինւորները տեսան որ վանքը պարպուած է, եկան պարապ վանքը այրեցին: Զէյթուն ըսածնիւ և թաղ է և և կամուրջ ունի, թէև ուրիշ կողմէն գաղանի ճամբայ ունի չզիտցող մարդ չկրնար ճամբան հանել միայն Զէյթունցիք կրնան ճամբան գտնալ, և կամուրջին զուխը և բաժին զինւոր զրին, ոչ քաղաքէն դուրս մարդ կելլէ ոչ ալ ներս կը մանէ. երեք թաղուր զինւոր ալ տանց ետեւէն լեռը ելան, որքան ալ փնտանցին չկրցան գտնել տղաքները, զիչերանց ուտելիք կը տանէին լեռը:

Կառաւարութիւնը յոյսը կարեց լուսնն, սկսաւ Զէյթունի մէջ փնտանել տղաքները* բան մը չկրցաւ գտնել, Չապրեան Էմմանուէլ չալուշ Զօլադեան Աբամ վանքը վիբաւորուած էին, Էմմանուէլ չալուշին արիւնտոտ չապիկը անտուկին մէջը գտան, հայրը Պետրոս սոգան բննցին Մարաշ կախնցին, յետոյ սկսան յեղախիտականներուն տուները խուզարկել, աղականները մանրխմները աքորերլու, ամէն մարդ ինչ ըլլալը չգիտեր, կը կարծեն թէ՛ յեղափոխականները պիտի ձերբակալեն և ուրիշներուն չպիտի դաշին, աղաներուն ալ պատուանշաններ պիտի տրուի:

Հիմա ոկսան աղաներուն և էֆէնախներուն տուները խուզարկել, այս ինչ փորձանք էր մեր գլխուն բերինք, ա՛խ ու վա՛խ ըրին օգուտ մը չունեցաւ ինչու որ ժամանակը անցուցած էին, և թաղէն Յը վերցուց մէկ թաղը մընաց մուսնետիկ մ'ալ կանչեց թէ՛ գացողը գնաց, մնացողը տեղը պիտի մնայ ու չպիտի երթայ:

Հաշուեցինք որ 2000 տունէն 200 տուն մնացած է, ասոր ալ փառք տուինք. խանութէն տուն գացի, տունը մեծ հայելի մը ունէինք առի խանութը բերի, մէկ Չաչանի 5 դրուշի ծախեցի. ատաւ գնաց, ժամ մը վերջը չաչան ետ եկաւ և տուած 5 դրուշը ետ ուղեց, ինչէն



եղաւ, ի՞նչ եղաւ: Ըսաւ թէ՛ վալլանի ազիւ Պիլլանի քե-
րիւմ ճամբան գացած ատենս գայնագամը և ուրիշ պաշ-
տօնեայ մը տեսան զիս որ հայելին կրնակս կախուած էր
կրնակէս հայելին առին, ոկսան ետեւէս գար: Շուտով ոտ-
նամանս հազայ Չաչանին հետը Աստուածածնայ եկեղեց-
ւոյն ետեւը դիմաւորեցի, տեսայ որ գայնագամը Տէվրիշ
պէյը հայելին ծառային կրնակը կուտան կուզան. ըսի
թէ՛ գայնագամ պէյ այդ հայելին իմս է Չաչանին ծա-
խած եմ ի՞նչու կաննես պատճառը ի՞նչ է, ես արհեստա-
ւոր մ'եմ եթէ արհեստաւորին ինչքերը պիտի բռնուին և
ատեւտուր չպիտի ընենք խանութնիս փակենք: Տղան
չսա լաւ կը խօսիս. Այս հայելին քուկդ է՛. Այո՛ իմս է,
Ծախեցիր Չաչանին. Այո՛ ծախեցի. Ճիշդը ըսէ քա-
նի՛ գրուչի ծախեցիր. Ծ գրուչի ծախեցի. Արժէքը քա-
նի՛ գրուչ է. Մէկ ոսկի. Տես նայիմ Ա ոսկինոց քան մը
Ծ գրուչի կը ծախուի՞. Այո՛ էֆէնտիմ իմ ինչքս է տուի,
ուզեմ նէ ձրի ալ կրնամ սալ այդ իմ դիտցած դործս է,
Գայնագամը ըսաւ թէ՛ հաւատացէք որ չպիտի երթաք,
ուսնցածնիդ մի՛ ծախէք, դուք ալ սպտեղացի էք:

Հինգ գրուչը չաչանին ետ տուի հայելին առի խա-
նութիս գացի, իրիկուան տունս եկայ: Առաւօտուն ելայ
խանութիս եկայ քիչ մը վերջը մուսնետիկ կանչեց թէ՛ Զէյ-
թունի մէջ մարդ չպիտի մնայ ամբողջը պիտի ելլան,
քովս շիշ մը օղի կար խոնցի, նաւաղն ալ դրի խանու-
թիս առջեւը և դառնիւ սալ սկսայ: Տաճիկները Չաչա-
նեքը հաւաքուեցան կը նային, գայնագամն ալ տեսայ որ
դէմս եկեր կը նայի, շուտ մը երայ հայելին առի գացի
գայնագամին օձիքէն բռնեցի ըսի թէ՛ էֆէնտի այս հայե-
լին երէկ Չաչանին ծախեցի Ծ գրուչի, դուն ետ առնել
տուիր հիմա մննք պիտի երթանք, հայելին ս'ա ստակը

տուր : Տղաս ես ձեզ հոգացի ինչքերնիդ չծախելու համար, դուք չպիտի երթայիք . գիշերները յեղտութեամբաններուն ուտելիք կը տանիք եզեր, անոր համար կտուղարութենէն հրաման ելաւ պիտի երթաք :

Աստուած ոչնչացնէ տանողն ալ բերողն ալ, իմ կողմանէ աշխարհի ցոյց մ'ըլլալու համար կախեցէք ուրիշները թո՛ղ շատրին . սակայն աղքատները ի՞նչ յանցանք ունին, դայմապամ պէյյ ստուգիւ դուրում կընէք բայց Աստուած մեր մեղքին բարկացաւ մեզ տածկին ձեռքով սրածեղ կուտայ . հասկցէք որ դուք ալ ուրիշներուն ձեռքով պիտի պատժուիք :

Հաճի կարապետ ի՞նչ կըսես, խելքդ գլուխդ ժողուէ, հողիդ բանտարկութիւն կուզէ՞, ան ալ բան մը չէ մարդը հրացանի կը բռնեն Հաճի մեղք ես ըսաւ : Նորէն օձիքէն բռնեցի, մէր կերթաւ ան հայելին ստակը տուր, հանեց 2 դրուշ տուաւ, կուզես տուր . Հայելին բռնեցի քարին զարնելուս պէս հարիւր կտոր եղաւ, 100 դրուշնոց հայելին 2 դրուշի առնել կուզէ : 16 000 դրուշնոց ստացուածքէն 15 ոսկի կրցայ բռնել . Գարձեալ ես շահաւոր ելայ . Պզտիկ իյաչեր ազային 30000 դրուշնոց պզինձի խանութը այնպէս թողաց, Սալաթեան Հաճի 4000 դրուշ ստակ ունէր 150 դրուշով ճամբայ ելաւ . փոխ տանողներն լուծա մը ետ շառին, վերջսպէս 40000 ոսկիի կարողութիւն ունեցողները ձեռքերնին դատարկ դուրս ելան, ինչու որ չէր յուսացուէր այս վիճակը :

Շուկան գինով վիճակի մէջ անցնող դարձողին հետ բռնուած ժամանակ՝ տեսայ որ աղաքները մէկ զէշ իչուն ձեռք մը ծածկոց քիչ մը կերակուր տաւ գրացիներուն հետ եկան մեզ տանելով լալով սղբալով ճամբայ ելանք, 3-400 տուն ըլլալով, երկու օրէն Մարաշ հասանք, Մա-

բաշի խաները բամբակցին բեռներուն սրահակ դրին . մար-
գու չեն թողուր որ ստակովը երթայ հաց ու կերակուր
առնէ, աղաքները անօթի ծառա մարեցան, Աստուած
մեծ օրեր աայ Մարաշի ժողովուրդին, այնքան աքոր-
եալները կերակրեցին, սամաման հագուստ մ'ընչեւ անգամ
օձաւը բերին խաներուն մէջը լեցաւցին և մենք խանը
կեցած ժամանակնիս, օրին մէկը փօլիս Ամէա չափուչը
ծանօթս էր քովս եկաւ տեսակցեցանք . դացած ժամանակը
իրեն աղաչեցի, որ դունէն դուրս ելլելը արգիլուած է,
հրաման ըրէ դուրս ելլանք կերակուր առնենք . փօլիս
Հաֆըզ էֆէնտին և Ամէա չափուչը դուրը կեցող Մարաշի
ժանաարմա սրահակին ըսին թէ՛ այս մարդը մեր գիտցածն
է ասոր արգիլը մ'ըլլար ուզած ժամանակ թո՛ղ երթայ
սրտի և ուակլիք առնէ :

Աստուտուն Քառասուն Մանուկ եկեղեցին դացի, և
կեղեցւոյն բակը Մարաշի Տիլօյիան Արթին ինծի առաւ
տարաւ տուն մը, հոն Հնչակիաններէն մի քանի հոգի ե-
կան տեսակցեցանք, ինծի ըսին թէ՛ 300 հոգի խօսք մէկ
ըրած ենք Ձէյթուն պիտի երթանք, եկուր մեզի ասաջ-
նորդ եղիր, քանի՞ ոսկի կուզես : — Ես ստակը ի՞նչ պի-
տի ընեմ միայն զէնք տուէք ինծի ես ձեզի ատաջնորդ
կըլլամ . հոն կարգադրեցինք թէ՛ կէս գիշերին Մարաշէն
ձամբայ պիտի ելլենք :

Երկու ժամ յետոյ Քառասուն Մանուկ եկեղեցիէն
կանչեցին զիս, դացի Տ. Դեւոնդ ու մի քանի աղաներ
ինծի հարցուցին թէ՛ Տիլօյին աղան Արթին քեզի ի՞նչ
ըսաւ և ո՞ւր տարաւ քեզի : — Ինծի բան մը չըսաւ միայն
տուն դացինք քիչ մը կերակուր կերանք : — Ճիշդ խօսէ
աղաս, այն կարգադրութիւննիդ իմացանք ասոր տակէն ու-
զէկ չելլար, շատ լաւ դուն ասանց ատաջնորդ եղար կը տա-

նիս, հարկաւ կառավարութիւնը պիտի լսէ թէ Մարաշէն ալյսքան հողի դացած է Զէյթուն, այն ժամանակ ինչ կընէ ժողովուրդին տղաս. մեզի լսես նէ ամբողջ ժողովուրդին արգելք մի ըլլար ըսաւ, ես ալ ձգեցի դացի :

Հինգ օր ամբողջութիւնով Մարաշ մնացինք. յետոյ սկսան մէկ մասը Հալէպ միւս մասն ալ Գոնեա ղրկել, ես Գոնեա երթալու վաճառքեցայ, Մարաշէն 2 Զորի 1 էշ 7 մէճիտի վարձեցի, տղաքները հեծցուցի 7 օրէն Օսմանիյէ եկանք, Յուլիսի 15ի արեւին տաքութեան տակ :

Օսմանիյէն 15 օր մնալէ յետոյ շոգնաւով Թարսուս քերին. 5 օր ալ հոն խաներուն մէջ մնացինք: Անկից կլանք հոգնելով իյնալով լալով վարձու կենդանի ալ չկայ քեռներնիս կնիկները և մենք շալկելով Պոզոնթան եկանք, հոն 15 օր մնացինք, մեր բաժինը 500 էինք, առաջ դացող ես մնացող բաժիններէն դատ. 15 օր յետոյ 60 ուղտ քերին, քեռներնիդ բերցուցէք և ելէք ըսին, 60 ուղտը 250 մարդ պիտի վերցնէ և մենք տղաքնիս առինք ճամբայ եկանք. 3 օրէն Ուլու Գըչլա դացինք, քաղաքէն կէս ժամ հեռաւորութեամբ ըլլալի մը գլուխը իջեցուցին, ուղտապանները ես դացին 250 հոգին ալ բերելու :

Ուլու Գըչլայի մարդիկը շատ գէշ մարդիկ էին, քովերնիս գանուող ժանտարմաները 2 օր անօթի և ծարաւ թողուցին և չթողուցին որ կերակուր ու Զուր բերէինք, 5 տղայ ծարաւութենէն մեռան: Զաւուշներուն աղաչեցինք պաղատեցինք: Ասոնք չընդունելէ դատ* ձեծելով վռնտեցին. 20 ոսկի հաւաքեցի աղքատ Զէյթունցիներէն դացի չաւուշին քովը աղաչեցի, չաւուշ աղա կենդանիները և մարդիկը անօթութենէ կը մեռնին, քեզի 5 ոսկի տամ թող տուր երթանք հաց և Զուր բերենք, անօթի ծառաւ չմոռնինք. ես ստակ չեմ առներ և հրաման

“ԱՄՐԱՆԳՆԱ” ԿՐԹԱԿԱՆ
ՀԻՄՆՈՒԹ 1935
ՀԱԼԷ
Լ. Ե. Ս
4-740777

ալ չկայ չեմ ձգեր, հասկցայ որ քիչ կը տեսնէ ստակը, առ քեզի 10 ոսկի տանք աղքատ խեղճ ենք թող տուր երթանք. ըսաւ թէ՛ 80 ժանտարմա ունիմ 10 ոսկին որ մէկուն պիտի բաւէ տուրճի մը զին չըլար, վերջը նա յիցանք որ ճառ չկայ 20 ոսկին տուինք այս մարդուն :

Չախուշ աղան 10 ժանտարմա տուաւ մեզի : 30ի չափ ջորի և էշ կար ամանները վրանին նետեցինք ու ջուրի գացինք . ազարակներուն մէջ ջուր կար, տէրէրը մեզի ջուր չտալէ վատ յարձակեցան մեր վրայ ծեծելով մի քանինիս ալ վիրաւորուեցանք, ժանտարմաները թող չեն տաք որ կատալարութեան դիմենք վիճակինս հասկցնենք . յետոյ 10 ժանտարմա եւս եկան և խայտարակութեամբ ջուր առինք, քաղաք գացինք կերակուր առինք ժանտարմաներուն հետք, վեց օր այն թուրին գլուխը մեր քաշածը շուները չքաչեցին . անօթի ծարաւ 6 օր յետոյ ուղտապանները եկան մեզի վերցուցին ասկէ, օր մը մինչև իրիկուն դաքեցինք, ճամբան զիշերը ուղտապանները վախան, մենք մտացինք կէս ճամբան, ետքը քաղաք եկանք :

Կատալարութեան լուր տուինք, կատալարութիւնն 40 էշ, 20 ուղտ և 10 ջորի տուաւ գացինք վերցուցինք բռններնիս իյնալով ելլելով էրէյլի հասանք . անկից շոգեւնաւ դրին Գոնեա հանեցին . հոս ալ խաներուն մէջ լիցուցին և ոչ մէկը դուրս կրնար ելլիլ, արգիւտած էր :

Երկու օր յետոյ կարգ բերին, տղաքները և բռտերնիս կարգը դրին ճամբայ հանեցին, ժանտարմաները կարողանները քաշած են, ճամբան ջուրին քովէն կանցնինք չեն թողուր որ ջուր խմենք . Ալապաշեան փանոս աղուն զեաէն ջուր առնելուն համար ծեծեցին և մեռաւ ու դիակը ցորենի հոր մը կար հոն նետեցին : Տ Մովսէս օղլու Արթինը ծեծեցին թեւը կտարեցին, իրիկուն եղաւ ուրիշ

նօզրա մը հասանք . ան ժանտարմաները փոխուեցան և ետ դացին , ուրիշ ժանտարմա տուին ասոնք լաւ էին և չցաւցուցած Սուլթանիչէ գայմազամըզը բերին :

Սուլթանիչէն 5000 տունէ լազկացած քաղաք մ'է . ժողովուրդը ամառուան օդախոխութեան համար այգիները դացած էին տուները պարապ էր , մէյմէկ տուն դրին նըստեցանք : Մեզմէ առաջ եկող Չէյթունցիներէն ուրիշ , Գօնեացի , Պրուսացի , Ատաբալարցի և իզմիացի՝ ասանց մեծերը հոն բերած են , կնիկները տղաքները մէկտեղ չեն . 4 հազար տունը հայերով լեցուեցաւ : Հոս անդաւորուելէ յետոյ ամեն մարդ սկսաւ իր գործովը դրազիլ . 15 օր յետոյ Չէյթունցիներէն ըլլալով 3 հարիւր հօդի վինուօր առաւ գործաւոր դրկեց , Գօնեայէն 15 օր հետու Պուլտուր բտուած քաղաքը և հոն 70 օր աշխատեցանք . իսկ մնացած ժողովուրդն ալ քաղաքին մօտերը մրեխ կտրելու դացին : ասարախոխիկ հիւանդութիւն մը ծագեցաւ , 8 հարիւր տղայ և 7 հարիւր աղջիկ մեռան ,

Երկու երեք ամիս յետոյ սեղուոյն գայմազամը կանչեց ըսաւ թէ Չէյթունցիք Մարաշ պիտի փոխադրուին : ժողովուրդը ուրախութենէն սկսան չունեցողին ստակ տալ և մատաղ կտրել : Գայմազամին զացինք թէ՛ ամէն մարդ մէյմէկ ծածկոց մէյմէկ ամաններ ու մանր տղաքներ ունինք , անոնք ինչպէս պիտի տանինք , կեճզանի կամկտաք չկայ , տղաքները ասնինք թէ ինքզինքնիս , Գայմազամը ըսաւ թէ որքան ինչքեր ւոնիք նէ բերէք դպրոցը լեցուցէք քահանայ մը մխթար մը քովը պահէ և ժողովուրդը թող երթայ . Էրէյլիէն կառք պիտի գայ ինչքերնիդ ձեր հտեւէն կը դրկենք : ինչ որ ունէինք հաւաքեցինք դպրոցը դրինք , Տ . Եզնիկ քահանայ , Եագուպեան Ապիկ Էֆէնտի 2 մխթար պահակ եղան և ամեն մարդ տղաքները ստինք ձամբայ ելանք ուրախանալով :

Էրէյլի եկանք , ժանտարմաները խարաղթները քա-

չելով վանակցին մեզ . անօթի ծարաւ իյնալով ելլելով ե-
կանք Աւուս Գրչյա . անկից ժամաարմաները նորէն ներս
չձգելով վանակցին . անկէ ճամբայ ելանք անօթի ծարաւ .
հոգնելով և ծեծ ուտելով , լալով հասանք Պողոսնիս : Հոն
նորէն չթողով ճամբայ ելանք : Ինչի լէկ Պօղոսը ամէլէ թա-
պուրը կրչխատէին ամէն կողմէն կրային և հայ էին . ա-
սանք մեղքոյն մեզի , ճամբուն վրայ մէկ երկու կեցած ,
ղիւղերէն հաց մուրացին տուին մեզի . մեծ խայտարակու-
թեամբ թարտուս հասանք . ոմանք ապարակները , ոմանք
ալ եկեղեցւոյ բակը իջանք . հոն փորերնիս լեցուցինք և
կսպատէինք որ մեր ետեւէն ինչքերնիս պիտի գայ : Երկու
օր մնացինք բեռերնիս չեկած , ժամաարմաները եկան ծե-
ծելով ճամբայ հանեցին մեզ :

Ատանա եկանք , հոն կայարանին մօտ դաշառ իջանք ,
փսնք Ասաուծոյ քարաքէն բուսական ուտելիք եկաւ , ժո-
ղովուրդը իրիկունը հանգիստ սրակեցաւ : Ասաուտուն
անպլխական օգնուաւ մը եկաւ վրանիս կը սրտրաի , երկու
ժանտարմա մեր մէջը մտան և սկան հրացան պարպել ,
որ վերէն պոմպա նետին և մեզի ջարդել տան , առ նը-
պատակաւ հոն ծեծկուեցանք , 2 հոգի մեզմէ և 1 հոգի ալ ի-
րենցմէ վիրաւորուեցաւ , յետոյ զինուորներ գալով վոըն-
տեցին մեզի անկէ և Օսմանիյէին վրան Տէյիրմէն Օճա-
խը ըսուած տեղը նստեցանք , հոն 13 ոսկի հաւաքեցինք
սէվդիթաթ մէմուրին բերինք աղաչեցինք , որ ամիս մը
հոս նստինք , ինչու որ տղաքներնիս հիւանդ են և մենք
ալ հոգնած ճամբու չենք կրնար գլխմանալ , այս մարդը
խնդրանքնիս ընդունեց ստակը առաւ , տակայն մեզի ամիս
մը հաց հանել տուաւ և աղօթք ըրինք այս մարդուն թէ՛
տղաքնիս հանգստացաւ թէ՛ դրամով կրցանք հաց ուտել :
Ամիս մը հոն կեցած ժամանակնիս՝ գործաւոր եղող 300
տղաքը ողջ սառողջ եկան մեզ դասն , Տ. Եղնիկ քահանան
և Եսողուպեան իյաչիկ էֆ.ն ալ եկան հասան , կանչեցինք

հարցուցինք որ մեր ինչքերը ի՞նչ եղան : Հոս ու հոն մը-
նաց ըսելով անցուցին , Հասկցանք որ այն ինչքերնիս ալ
անոնք ծախած եկած են , ալ ըտլորովին մերկացանք :

Գիւղերէն տաճիկները կուգան կանցնին Տարտանէլ
կերթան , անոնց հարցուցինք թէ՛ Զէյթունի կողմերը ի՞նչ
կայ ըւր մը տուէք : Տաճիկ բարեկամներէս մէկը ըսաւ
թէ՛ դուք որ Զէյթունէն ելաք և մինչեւ իմ կեցած օրս ,
Պօշնակ և Արնաւուս գաղթականներով լեցուցին : Զէյ-
թունը պարպուելէն յետոյ լեռը կեցող 600 յեղափոխա-
կանները գիշերով կուգան Զէյթունի ամեն կողմը կը պա-
շարեն և կամուրջները կը քակին ու ամէն կողմէն կը կրա-
կեն կայրեն , կամուրջէն փախչողը կը զաննեն և չփախ-
չողն ալ մէջը կայրի , և Զէյթունը աւերակ կընեն , կոռա-
ժարութիւնը կէս ժամ հետու զօրանոցն է եղեր վախէն
անկէց կը փախչի Զէյթունէն 7 ժամ հետու Չայտաղ գիւղ
անունով շաչանի գեղ մը կայ գայմաղամլըխը հոն կը փո-
խադրուի և Զէյթունի մէջ ո՛չ մարդ և ո՛չ կառավարու-
թիւն կը մնայ :

Յեղափոխականները գիւղերը կը թալանեն և այգի-
ներէն խաղող կը բերեն կուտեն , տաճիկը դարձեալ ըստ-
թէ՛ թիւրքերէն , քիւրդերէն և չէրքեզներէն զինուորական
փախատականները ամբողջ հոն կերթան կը միանան և միա-
սին կը գործեն ու կուտեն կը խմեն :

Տէյիրմէն Օճախին յետոյ Մարաշի գիւղերէն Յնաը-
ճաղ ըստած գիւղը , որ 6 ժամ հետու է , այս գիւղի ժո-
ղովուրդը կտրիճ և ամբողջը հայ են ու հազար տունի
չափ կան : Ասոնք ալ կը տեսնեն որ ամէն կողմէն գաղ-
թականներ կերթան և իրենք ալ հանելու պիտի սկսին ,
զայս գիտնալով իրենցմէ մի քանի հոգի Զէյթուն կերթան
Զէյթունցիներուն կրսն թէ՛ մեզի ալ տեղահան պիտի ը-
նեն , մենք գաղթելու միտք չունինք , եկէ՛ք միացէք մեր
հետը , պատերազմինք և չգաղթենք :

Զէյթունցիները կը համոզուին, Չազրեան փանոս աղային և Չոլագեան Մեսրոպ աղային խումբերը Ֆնտրճագ կերթան կը միանան անոնց, հոն 2 օր նստելէ յետոյ Մարաշէն 50 ժանտարմա և սպայ մը ասոնք վերցնելու կուեան, մենք տեղերնէս երբէք չենք ելլեր ըսելով ժանտարմաներուն վրայ կը յորձակին, 50 ժանտարմայով սպան կը սատկեցնեն: Մարաշ կը լսուի այս եղելութիւնը կատարութիւնը Մարաշի տաճկաց մեծերէն 30 հոգի և 10 հոգի ալ հայ ազաներէն Ֆրնտրճագ կը զրկին պատուիրելով թէ՛ գացէ՛ք համոզեցէ՛ք և խրատեցէ՛ք, որ աղայութիւն չընեն գան յանձնուին իրենց դաղթականութիւնը վնց ամսու համար է, յետոյ պիտի վերադառնան: Ասոնք խրատելու կերթան, անոնք կը զառնեն:


Մարաշի կատարութիւնը եղելութիւնը ամեն կողմ լուր կուտայ. Ատանայի վալին 4 թապուր, 4 թապուր զինուոր ալ Հալէպէն կուգան կսկսին պատերազմիլ 20 օր պատերազմելով. Ատանայի վալին կը վիրաւորուի և շատ մը զինուոր կոտրելէ յետոյ Զէյթունի լեռները կը վախճին, զինուորները զիւրը կը մտնեն կայրեն և աղաքները կը բռնեն քարի կը զառնեն և կնիկ ազջիկ կտրելէն յետոյ, պարաւներն ալ կը ժողվեն Մարաշ կը բերեն, ժանտարմաները մեր թաղին միթարք, Սուրէնեանը և մի քանի ազաները Մարաշ վար դրած էին, 2 մարդու զուլի կը բերեն կը հարցնեն թէ՛ Զէյթունէն Չազրեան փանոս և Չոլագեան Մեսրոպ աղաները իր խումբերով եկած են կըսուի, ասոնք անոնց զուլիներն են թէ՛ ո՛չ, մենք ըսինք թէ՛ ասոնք Զէյթունցի չեն և ստուգիւ ալ չէին:

Ասոր վրայ Զէյթունցիներէն 130 հոգի բանտարկեալ կար ամէն իրիկուն 20-30 հոգի կը հանեն կը կախեն և ազգն ալ կը թաղէ: Ասոր համար մեզի ըսին թէ՛ դուք Մարաշ չպիտի երթաք, Տէր էլ-Զօր պիտի երթաք, 130

հողին չկատած 18 օր առաջ հանած են և Մարաշ կը զըս-
նուէին, ասոնց տըաքները մեր հետն էին ու կը լսեն որ
մենք Տէյրմէն Օճախէն կը վերագտնանք, հոն եկան այս-
ամենը պատմեցին. և Յնարդճաղէն ալ 500 հողի Զէյթուն
դացած են այնպէս կը հաշուուի որ 1500ի չափ բազմու-
թիւն մը կայ և Տէյրմէն Օճախէն ալ 20 հատի չափ փա-
խան և Զէյթուն դացին: Մինչև այս ժամանակները Տէ-
յիրմէն Օճաղը կապատէինք և կը յուսայինք թէ երկիր
սկիտի վերագտնայինք, այս գէպքէն վերջը բոլորովին
յոյսերնիս կտրեցինք երկրի երես տեսնալէ,

Օրերնիս լրացաւ, ժանտարմաները եկան խարտղան-
ները քաշեցին, ճամբայ ելանք, ո՞ւր կերթանք կը հար-
ցընենք, Տէյր էլ-Զօր կըսեն: Տղաքները կէսը ետեւէն
կէսը առջևէն լալով ողբալով և մեռելնիս երբեմն թաղե-
լով, ծերերը և պարսաները ճամբան թողելով, մայրերը
իրենց երեխայները ճամբուն եղերքը ծառերուն տակը
թողելով, խարտղանի գտազանի հարուածները անհամար
զուխներնուս կիջնէր, մէկ կողմէ Պօլխէն Սլաղէն ամէն
զիւզերէն բազմութիւնը կաւելնայ. առաջուց Մարաշէն,
Զէյթունէն, Ալպիսթանէն, Հալէպէն լեցուած էին և մենք
ալ դացինք հասանք. մէկ մասը Տէյր էլ-Զօրի մէկ մասն
ալ Շամի համար բաժնուեցանք:

Մեր ճամբան Տէյր էլ Զօր եղաւ, նորէն շատ չար-
չարուելէ յետոյ Տէյր էլ-Զօր հասանք. հոն մեզ հաշուելով
10 օրուան համար 10 տրան զրուշ տուին, Այն ժամա-
նակուան միւթէսարըքը լաւ մարդ մըն էր, ամիսը 30
զրուշ ստակ կուտար, տեղերնիս շատ արեւոտ էր, եր-
բեմն անօթի երբեմն կուշտ կանցնէինք օրերնիս: Այս
միւթէսարըքը՝ 9 հողարի չափ որբ ու մերկ տղաքները
հաւաքեց որքանոց բացաւ կը կերակրէր ժողովուրդին ալ



հող կը տանէր, Թիւրքերը սկսան պանդտախի թէ այս վաշան կեամբուր է եթէ քրիստոնեայ չըլլար նէ այսպէս չէր խնամէր Արարիա եկանք, հոն նաւակներ բռնեցինք, 2 նաւու մէջ 260 հողի նստեցանք, մարդ զլուխ ոսկի մը վարծք սալով Սափշա ըսուած տեղը եկանք, նաւաստիները զխտամբ նաւակները չըջեցնելով 200 հողի խզողուեցան, ասոնց մէջ կէյիկեան վալիիմը արդան Յովնէիը և 3 հաս ալ Գունուզիի արդատեցան և Տէյր էլ-Չօր հասանք :

Փաշան Պաղտատ վալիի փոխանորդ քրին : Ասոր վըրայ էրզըրումի կողմէն ուրիշ փոխանորդ մը կարգուեցաւ :

Մեզի սկսան միւտիւրլիքը դիւզիւրը ըսմանը, որովհետեւ հետզհետէ գողթականները կը լեցուէին : Մեզի 45 տուն Տէյր էլ-Չօրէն 12 ժամ հաու Սըլէտ ըսուած միւտիւրլիքը զրկեցին, հոն հողէ մէյմէկ անակներ չինելով նստեցանք :

Էրզըրումէն եկող փաշան Հալէպ կուզայ, անկէ ալ Բաս իւլ-Ային՝ 150 չաչան չէթէ և 6 հաս ալ չաչան պէկէրէն ստնելով մեր դիւզը եկաւ, մեր միւտիւրը փոխեց և չէրքէզ միւտիւր մը կարգեց, մեզ կանչելով պատուիրեց որ տասնկ անակներ չինենք չաչանները և չէթէները նստին, այս տեղը մէրքէզ պիտի ըլլայ ձեզի ալ վէտիքա պիտի տամ, ձեզի մարդ մը չպիտի դոյչի, դուք եւս չաչաններուն պիտի ծառայէք, մեզի վէտիքա տուաւ :

Մենք սկսանք խանի մը պէս տեղ մը չինեցինք, պէյերը, չաչանները մէջը մտան նստեցան, մենք ալ սկսանք անոնց ծառայելու : Փաշան Տէյր էլ-Չօր գնաց քովը եղող չաչանները պէյերը զիւզերուն վրայ միւտիւր կը կը կարգէ, Տէյր էլ-Չօրի կատալարութեան պաշտօնեայները փոխեց և դուն կաշարք կերար և կամ հայերուն հետը ըս վարուեցաք, ըսելով :

Տէյր էլ-Չօրը՝ Հալէպի և Մուսուլի մէջտեղ փաշալըդ

մէ, ո՛չ Հալէպը կը ճանչնայ ո՛չ ալ Մուսուլը, միւսթա-
քիլ սանճագ է: Պօլսոյ հետ ուղղակի կը հաղորդակցի:
Փայան հրաման մը ըրաւ և Տէյր էլ-Չօրի գաղթական-
ներուն հաշիւը ուզեց, 15 օր ետքը լուր առինք որ 75000
հողի կայ եղեր, հրաման մը հանեց որ ամբողջ գաղթա-
կանները Տէյր էլ-Չօր Քապուր ըրմաղի մօտ պիտի նըս-
տին և Տէյր էլ-Չօրի ու Քապուր ըրմաղի միջեւ ճամբայ
պիտի շինուի, ալ որ կամաւոր երթայ աշխատի անոնց
սունը և աղաքները չպիտի վերցնեմ: Գործերնին լաւ և
դողներէն 900 հողի կամաւոր գրուեցան, որ սուններնին
չվերցուի, ասոնք իրիկուան դէմ մեր գիւղին մօտերը և
կան պարկեցան: Գացինք տնտեսեցանք և հարցուցինք որ
ո՛ւր կերթաք, ըսին որ ամսու մը չափ պիտի երթանք
աշխատինք, որ Տէյր էլ-Չօրէն չգաղթենք, ինչու որ գոր-
ծերնիս լաւ է, ատաւօտուն ելան գացին:

Ատաւօտուն կանուխ 4 հողի ճամբայ ելանք այն կող-
մերը 5 ժամ հեռաւորութեամբ գիւղ մը գացինք, չաչա-
ներուն, ձիերուն գարի ցօրեւ, ասնկու, գիշերը ձիերուն
բեռերը բանեցինք պարկեցանք: Ատաւօտուն անասուննե-
րուն ուտելիք առինք, մենք ալ նտտեցանք կերակուր
կուտէինք, տեսայ որ արօք վրանին մէկ կողմը 2 մար-
դու բարձրութեամբ արիւնտտ հաղուստ կայ, ընկերս կան-
չեցի Արթին հոս եկուր, Արթինը քովս եկաւ և ըսի թէ*
աս ի՞նչ է, ինքզինքնիս կորանցուցինք և արապին կան-
չեցինք հարցուցինք: Ըսաւ թէ՛ Տէյր էլ-Չօրէն 900 հայեր
գործաւոր եկան, միւսթէսարըֆն ալ ետեւէն եկաւ, այս-
ինչ ըլլաւին գլուխը ամբողջը ջարդել կուտայ. անոնց հա-
զուտաներն է որ գիւղերուն աղքատներուն պիտի բաժ-
նենք, վախերնէս արապին ըսինք, Ասրպաս աղա կը խընդ-
րենք քեզի 20 զրուչ ասնք մեր գիւղը ցուցուր դուն ետ
գարձիր մենք ճամբէն կը վախնանք. արաքը ըսաւ թէ՛

մի՛ վախճաք, ձեզի համար բան մը չկայ. դուք միւթէ-
սարքերն մարդիկներն էք վէտիքա ունիք ձեզի ու է մէկը
չկրնար գպչիլ, նորէն խնդրեցինք, 20 դրուչը սառա դէն-
քը լիցուց ձին հեծաւ, մենք ալ սկսանք առջիւէն երթալ
Երկուք ու կէս ժամու չտի գիւղէն հեռացանք, հոն բլուրի
մը մօտ արաքը ըսաւ թէ՛ կենդանիները թող հոս մնան
դուք հանեւս եկէ՛ք, գացինք բլուրը ելանք և տեսանք որ
900 հոգին հոն ջարդուեր են, ետ գառցանք ճամբան լա-
լով կուզանք լիզունիս բռնուած սառնց մէկգմէկու հետ
տեսնուելու, մեր գիւղին մօտեցանք արաքը ետ գնաց, ըսի
թի՛ մէկու մը բան մը չըտինք աղաքները չվախցնենք,
տեսնենք վերջը ինչ պիտի ըլլայ:

Գիւղը եկանք, ընկերներէս երեքն ալ Տէյր էլ Զօրի
կողմէն եկան, քիչ մը խօսակցելոյ յետոյ մէկգմէկու հար-
ցուցինք որ ի՞նչ լսեցիք և ի՞նչ տեսաք. Հաճի բան մը
կայ սակայն չենք ըսեր: Տղայ եթէ դուն չըտես, մինչև
սառաօտ չմնար կը լսուի ալ աւելի աղէկ դուն ըսէ, որ
չմտասանջուինք³: Ինչ պիտի ըլլայ որքանոցը եզոզ տը-
ղաքները վաչան ջուրը նետել տուաւ, թորոս ի՞նչպէս
խօսք է ի՞նչ կըտես աչքովդ տեսար թէ՛ իմացար երթք
ըլլարու բան չէ: Աստուած վկայ աչքովս տեսայ, Աչքովդ
ի՞նչպէս տեսա՛ր, Զուրը թափողները աչքովս տեսայ: սա-
կայն մէկ մասը Զրունի տէրէն կրակով այրած են անոնք
չտեսայ: Թարսուցի Մարաիրոս Իսրապիանին հետ տե-
սակցեցանք ըսաւ թէ՛ ես կատքովս 8 հատ ալ ուրիշ կատք
ունեցողներ՝ մենք ձեռքովիս ստօրինք Զըրըն տէրէ, մեծ
մասը հոն այրեցին և մնացածն ալ ջուրը թափեցին:

Կարգացողներ, ասոնք երո՞զ չեն, աչքերնիդ բացէ՛ք
այս տեսակ առեւելի դէպքերուն մէջէն ողջ ազատած ենք:

Երկու օր վերջը 12000 ժողովուրդ մանր աղաքներով
կնխկներով եկան գիւղերնուս մօտ նստեցան, 3

մնացին : կը հարցնենք թէ՛ ո՞ւր պիտի երթաք : կըսեն թէ շողենուտին կայսրանը և ամէն մարդ իր երկիրը պիտի գրգնեն : Փաշան գալով 12000 հողիին մէջէն 35 հարուստները զատեց , ասոնց մեծ մասը Ատարազարցի էին , Փաշան ասոնց ըսաւ թէ՛ ազաններ զուք խելացի մարդիկ է՛ք , սուտէք ձեզի ինչ կը խօսիմ , ամենքնիս ալ գիտենք որ այսպիսի մէկ պատերազմի ժամանակ անասկը ամեն ժամանակ ստակ չգտնուիր : Այո՛՛ տէյ իմ այնպէս է սրտատխանեցին Ես ինչ ընեմ այսքան սապի սիւղեանը , բան մը չկայ որ ուտեստ տամ : Եկէք ձեզի սէնէտ տամ 5-10 հազար ոսկի տուէք ինծի անօթի եզոզներուն բամբակ որ ժողովուրդը անօթի չմեռնի : Պօլլա ուտեստի համար պրեցի , անկից ստակ պիտի գայ այն ատեն ձեր ստակը ամբողջութիւնով ետ կուտամ , ասով ձեր սղգակիցները ազատած կըլլաք : Հարուստները 13 հազար ոսկի հաւաքեցին բերին փաշային : Փաշան ըսաւ թէ՛ ի՞նչ է սա ստակ է , 75000 հողիէն որ մէկուն տամ այս ստակը ըսելով մերժեց : Հարուստները գացին 23000 ոսկի ստակ բերին , ստակը առաւ և զլրենք ալ բանտարկեց և զլչերով մեացնել տուաւ :

Առաւօտուն կանուխ եկաւ , 35 հարուստներուն տըղաքները կիները աղջիկները ամենը 200 հողի մեզմէ գատեց ըսաւ թէ՛ հայրերնիդ այսինչ զիւզն է ձեզի կսպանն , մի կենաք զուք ալ հոն պիտի երթաք . տարաւ ասոնք շարքիկ տուաւ և կոզոպակց :

Մնացեալ 12000 ժողովուրդը վերցուց և գացին : Երբորդ օրը կէս զիչերին 2 աղայ եկան վիրաւոր և մերկ , մէկը Զէյթունի մէջի թաղէն Չանչեան Մինաս 25 տարեկան միւսը վերի թաղէն Պէրպէր Արթինին ազան երեմիա 19 տարեկան : Այս 2 երիտասարդները կէս զիչերին մեր տունը եկան , ասոնց հազուստ տուինք և վերքերնին փաթ-

թեցինք ու 3 օր մեր քովը պահեցինք, հարցուցինք թէ ո՛ւր գացիք, ի՞նչ եղաք: Ի՞նչ պիտի ըլլայ Հաճի կարապետ, ասկից գացինք 12 հազար հոգի ըլլալով Գապը ըրմաղէն ժամ մը հեռաւորութեամբ այն գիշերը հոն մնացինք: 150 չաչան, 150 ժանտարմա, 150 ալ արտաբ այս 450 մարդիկը փաշային մարդերը ըլլալով ամեն կողմերնիս պահեցին, փաշան ձխաւոր մը գրկելով գիւղերը, մաս մ'ալ արտաբ բերել սուաւ, գիշերը պաակեցանք:

Ասուտառն արեւը ծագելուն՝ ամէն կողմէն կրակ բացին, սուրերով հասար գաւազաններով ամբողջը ջարդեցին, մենք ալ մեռնողներուն տակը մնացինք, գիշերը մարդ չմնալով փախանք եկանք. հիմա համոզուեցանք որ մենք ալ պիտի մեռնինք. Երեք օր վերջը Հալէպի կողմը փախուցինք այս տղաքները: Գարձեալ 10 հազար հոգի եւս եկան. Հարցուցինք թէ՛ ո՛ւր կերթաք. Ըսին թէ՛ Գապըր ըրմաղին մօտերը կառաւարութիւնը մեզի տեղ պիտի տայ հոն պիտի տեղաւորուինք այգիի և սպարաէզի տէր պիտի ըլլանք: Մենք ալ ըսինք թէ՛ մի՛ հաւատարմ եղբայրներ, կը տանին ջարդելու, և մենք աչքովնիս տեսանք: Չեն հաւատար մեզի: Ըսինք թէ ձեզմէ առաջ 12 հազար հոգի եկան ու գացին անոնք ջարդեցին անոնց մէջէն 2 հոգի ազատեցան և փախուցինք: Եկէք ձեր հետը մէկ ըլլանք այս փաշան սպաննենք, մեռնիլը պիտի մեռնինք, զո՞նէ փաշան ալ մենք ստակեցուցած ըլլանք: Ռբջան որ աշխատեցանք չկրցանք համոզել: Փաշան օրը հինգ անգամ հազուատ կը փոխէ կառքով կը պարտի:

75 հազար հոգիին ջարդուիլը 3 ամիս տեւեց, Ասոնցմէ զատ 21 հազար հոգի ալ Հալէպի կողմէն կը բերուի, առանց մեր գիւղին քովէն անցնելու կը ջարդեն, ընդ փմենը 96 հազար հոգի կը ջարդուի:

Տէյր էլ-Զօրին մօտերը մենք ալ հոն չաչաներուն ծառայ ենք, ինչ որ կրկայ աչքովնիս կը տեսնենք չենք հարցնենք որ այտանդ մէքքէդ է : 75 հազար ժողովուրդ հոն եկաւ, առաջին մասը 12 հազար հօգի ամիս մը հոն մնաց հաքէն եկող բաժինները 3-5 օր աւելի չմնացին : ձիւ միսին օխան 8, իչու միսը 5, շան միսը 3 դրուչ, հաց երբէք չկայ օձ մը վախչի ետեւէն 5-10 հօգի կը վազէ . Զինուորներուն ձիւուորներուն աղբին մէջէն ելլող դարբին համար մէկգամէկու հետ կը ձեծկուին : Կնկան մէկը իր 10 տարեկան աղջիկը մօրթած և սղինձէ ամանին մէջը դառն, այն հարուստները և արեւ չտեսած կիները իրենց տունք դառնուկի միսը չհաւնողը ստակով չան միսը եթէ գառնան կուտան , Այս ամէն շարչարանքները անցան , վերջին բաժինը 9 հազար հօգի մնացեր էր եկան իրիկունը գիւղը սրակեցան , առաւօտուն մեր ԿԿ տունն ալ մէկտեղ խաւնկով ճամբայ ելանք Չարդուելու . իրիկունը կեդրոնը հասանք որ ամէն կողմը մարդու գիակ կը բուրբ , մեակները լեռան սէս գիղուած , Գապը բրմաղին քով քացինք Չուր առնելու համար , ըսչց գիտին վրայ գիտկներով լեցուն է եղերքները , ուրած են չենք կրնար Չուր առնել , երկու ձեռքովնիս գիտկները կը ձեղքենք ու Չուր կառնենք : Իւրիկուն եղաւ տղաքները սրակեցուցինք ամէն կողմներնիս սրակներով կը սրանն , առաւօտուն մեզ ալ պիտի կարենն այլ ևս յոյսերնիս կարեցինք . վախչելու տեղ չկայ որ որ վախչիս , ամեն կողմ արաքներ , անասպատ , Աւտուած ի՞նչ քնեմ , առաւօտուն մնանք նէ պիտի մեռնինք , մեռնելէ չենք վախնար , եթէ կապարով մեռնինք , կը վախնանք թէ՛ հասար բուրով ու սուրով շարչարանքով կը Չարդին , այո մտատանջութեան մէջ Զէյթունի վերի թաղէն Յարութիւն Տէմիրձեհանը քովս եկաւ , ըսաւ թէ՛ Հա-

ճի կարապետ ի՛նչ ընենք, բան մը մտածենք, մեռնիլը պիտի մեռնինք ասկից փախչինք, փախչելու ատեն կամ կապարով կոպաննեն կամ կազատինք: Ասանկով մէկզմէկ համոզեցինք և 2/3 հոգի հաւաքեցի ամէնքս ալ խօսքերնիս մէկ ըրինք, քսան հատիս քով վեց հարուած կայ, մեր կողմի նօզթան 4 Չաչան 1/2 ժանտարմա սրահակ կայ, զի շերը ժամը 5ին ըստ թրքաց հողինիս կրակ ատնելով և գօրաւոր յարձակումով մը յանկարծ վրանին գացինք և վեց հարուածներով զանոնք սպաննեցինք ու մենք դո՛ւրս ելանք, ասկայն ամէն կողմէն կրակ լացին ժողովուրդին: Աստուած օղնէ այն տղայներուն և աղջիկներուն ու կընիկներուն սղբ ու կոծց մինչև երկինք բարձրացաւ, մենք փախանք, Գապըր ըրմազին եզերքէն կուգանք որ Եփրատը պիտի գանանք եթէ Մուրատ զեար չկրնանք գտնել չափա չենք կրնար հանել. վար գալու ատեն տեսանք որ 150 արաբ դէմերնիս կուգան, ասոնք մեռնողները կողպտելու և հայիրը ջարդելու կերթան: Ասոնք մեզ պաշարեցին և հրացաններու պատն, մենք ալ իրենց, և սկսանք մէյմէկ կողմ փախչիլ. ես երկու ընկերով ջուրը նետուեցանք ու միւս կողմը ելանք մերկացած, միւս ընկերներնիս կորսնցուցինք, դիմացի կողմէն կերթանք և Եփրատը կը փնտոենք եթէ չգտնանք պիտի մեռնինք, Ասաւտ եղաւ ի՛նչ ընենք շուարեցանք. ազարակ մը գրտանք ներս մտանք հոն պահուըտեցանք սոսաւտէն մինչև իրիկուն, երեկոյին ձամբայ ելանք Եփրատը գտանք այն օրն ալ մինչև իրիկուն ջուրին մէջը մնացինք, և ընքնիս եզերքը ելանք նստեցանք սկսանք մտածել, որ վեր երթանք Հալէպը կը գտնենք, վար երթանք Պաղտատը կը գտնենք. երկուքը կրսն թէ՛ Հալէպի կողմը փախչինք, ես ալ կրսն թէ՛ Պաղտատի կողմը փախչինք:

ինչու որ եթէ Պաղտատ երթանք՝ յոյս մը կայ որ անգլիացին մօտ է կըլլայ որ անգլիացւոյն ձեռքը կըյնանք կազմարինք և Պաղտատ գաղթական չկենալուն համար ազգը մեզի կը սիրէ ու կը հողայ, սակայն Հայէս կըրթանք գանձօթի կը մեռնինք հազարներով գաղթականներ կան, որ քան խօսեցայ չկրցայ համոզել . Աստուած հետերնիդ ըլլայ ըսելով լալով մէկգմէկէ զասուեցանք :

Անոնք Հայէս գացին ես ալ երեսս Պաղտատի կողմը դարցուցի, իրիկունը անօթի ծարաւ մերկ գազանի պէս ճիւղի պէս ալ չեմ գիտեր, չարչարանքս ալ մոռցայ, ընկերներէս ալ զասուեցայ, սխայ լալ ու ոլրալ, սակայն օգուտ չունի, գիշերը մինչև ստաւօտ կը քալեմ, ստաւօտէն մինչև իրիկուն կը քնանամ քարայրի կամ խորշի մը մէջ, օր մը ազարակի օր մը ձորի մը մէջ խտուտելով ճամբաս կը շարունակեմ, խտտ մը տեսայ որ աչքիս լաւ երևցաւ փրցուցի կիրայ, Աստուած թշնամոյս դիտուն չի սոյ 2½ ժամ բերանս փրփրեցաւ ըստը քաշած չարչարանքէս ալ դժուար եղաւ, այսպէս երթալով գիշեր մըն ալ մարդու հասակէն բարձր փուշերուն մէջ ինկայ անանկ փուշեր որ մարթն վրայէս կը սկրտուէր երկու ժամուան համբայ դացի չհատաւ, երեսս դարցուցի, 8 9 օր եղաւ բան մը կիրամ չեմ, Առաւօտ եղաւ տեսայ որ գիւղ մը կայ մտածեցի հոն երթամ կամ կաղաննեն կազատիմ կամ թէ կտոր մը հաց կուտան, կամաց կամաց գրնջելով և մերկութիւնս ալ ձեռքերովս գոցելով առ աւելին շուներէ կը վախնամ զաղան կարծելով վրաս կը յարձակին, « Աստուած ստեղծածդ այսպէս չարչարանաց կը մատնես » տունի մը մօտ գացի, քիչ մը ետքը ալջիկ մը դուրս ելաւ զիս տեսաւ փախաւ, հայրը դուրս ելաւ քովս եկաւ վիճակիս նայեցաւ ցաւեցաւ, տուն դնաց արապի

Հ Ա Լ Է Պ

մը մաշլազ բերաւ հազայ առաւ զիս տունը տարաւ, հոն փորս լեցուցի և ինծի ճամբան ցուցուց : Ճամբան ձեռք առի ալ եւս ցորեկով կերթամ, ուրիշ զիւզ մը ինկայ, քիչ մը հաց մուրացի, անունա կը հարցնեն . անունա Եռուսեփ է . Ո՛ր կերթան, հարցունող ըլլայ նէ Պաղտատ հոն աղաս զինուոր է զայն տեսնելու կերթամ, աամնկով Պաղտատ եկայ, զինուոր մը զիս բռնեց, զուն ո՛վ ես, ո՛ւսկից կուզաս, ո՛յր կերթա : Ըսի թէ՛ գալթական եմ, աղաս հոս զինուոր է զայն տեսնելու եկայ : Այն առն ըսաւ թէ՛ հայրիկ հա՛յ ես : Այո՛ հայ եմ : Ես ալ հայ եմ ըսաւ, Անունդ ի՞նչ է . Ձէյթունցի Հաճի կարասկա : Բու անունդ . Ասանացի Մանուկ, աղաչեցի որ զիս եկեղեցի տանի, ճամբան կը վախնամ փոխաներէն կը բռնուիմ : Ես սրայի քով ծառայ եմ շատ հնու ես կուշանամ և զիս կը փնտռէ : Կը շուարիմ, ի՞նչ ընեմ . ըսի թէ՛ ինչ կուզես ըրէ Մանուկ աղա ասոր ճառ մը գնիր, առաւ զիս եկեղեցին տարա :

Եկեղեցիին քանանան ժամկոչը և մխթաբը եկան, քիչ մը խօսակցեցանք զլիուս եկածները պատմեցի, կերակուր կերցուցին, հազուա ծածկոց մինչև անգամ ծըլտախտ բերին և ամիլել տուին : Աստուածձամեն ժամանակ աւելցունէ և երջանիկ պահէ ազգը : Հայելիէն նայեցայ որ մարդու կերպարանք ատեր եմ : Սենեակ մը ասըրին, հոն իղմիացի Նարպանդ Յակոբ մէկ մ'ալ վանեցի Պեարոս անունով 2 փախստական պահուրտած ինծմով 3 հողի եղանք, ինծի թախն թէ՛ Ձէյթունցի մը կայ կրնաս ճանչնալ : Թո՛ղ զայ տեղոսիմ, եկաւ տեսայ որ Գապր ըրմտող իմ հետ Չուրը նհաուողներէն մէկը, ինծմէ 5 օր աղաջ Պաղտատ եկած է, մէկ մ'ալ Հաճընցի Պարասպանեան կարասկա . 75 հազար հողիին մէջէն 3 հողի աղատուելով Պաղտատ հասանք .

1915 Յունվար 6էն մինչև մարտ 10 ազլը մեզի պահեց չյանձնեց, Մարտ 10ին անգլիացիին Պաղատառը գրուածից մենք ալ ազատուեցանք: Կեցցէ՛ անգլիական կառավարութիւնը որ արաքներէն 150 ազլիկ կ'նիկ և աղաքներ 80 հատ ալ զինուորի փախուած բերաւ ստանցմով եկեղեցւոյն մէջ 230 հոգի եղանք: Անգլիական կառավարութիւնը ազգին 5000 բուպլի ստակ տուաւ մեզի կերակրելու համար, հատնի նէ նորէն պիտի տամ ըստ:

Կարծես թէ նոր աշխարհ եկանք շնորհիւ անգլիական կառավարութեան 2 ամիս Պաղատառի հանդատութիւնը վաշխեցինք, 2 ամիս յետոյ հրաման եկաւ, որ Կիպրոսի մէջ հայու բանակ մը կը կազմուի Ֆրանսական կառավարութեան հրամանին տակ, Տաճկաստանի գէմ վրէժ լուծել ուղարկելով: 30 հոգի կամաւոր գրուեցանք, Պաղատառի աղաները Աստուած հաստատ պահէ, մեզ ըսին թէ եկէք սղաքներ մի երթաք, այսօր ամէն մէկը հազար հոգիի գէմ էք, այսքան մահուընէ՛ ազատեցաք կը բաւէ, մի երթաք, 150 հատ զաղթական ազլիկներ հաւաքուեցան 80 հատ ալ դուք էք, եկէք ամեն մէկ ազլիկ առէք ճական ոսկի ալ դրամ տամ ձեզի աշխատեցէք և տուն եղէք: Մենք չընդունեցանք 30 հոգի գրուեցանք համբայ եկանք. 46 հոգի հոն մնացին չեմ գիտեր այլ եւս թէ՛ ազլիկ առին թէ ստակ:

Անգլիացիք մեզի նաւ դրին կերցնելով խմցնելով 5 օրէն Պասրա հանեց, բանակատեղ գացինք հոն զգեստ պաթանիա ոտնաման, ուտելիք խմելիք ուրիշ ինչ որ պէտք է տուին. Զուրը չգտնողները՝ թէյը չեն հաւնիր, հացը չգտնող խոտ ուտողները, խաւարած տուփի միւսը չեն հաւնիր, խոզի միս չենք ուտեր դառնուկի միս կուզենք. 15 օր մեզի նայեցան. առաջ ամենքս ալ գերեզմանի փա-

խուստ էինք, հիմա ամէն մէկս մէյմէկ արիւծ եղանք, 15 օր ետքը մարդ զուլս 80ական զրուշ ստակ առինք և Ղազիկեան Օհաննէս անուն հայէ մը 100 բուլլի նուէր եկաւ, ուրախանալով առինք և 17 օրէն Սուէիդի նեղուզուցը եկանք, անկէ ալ Փօրթ Սայիտ եկանք. ինչ է վրէժ լուծելու կերթանք: Բժշկական քննութիւն կատարուեցաւ, ինծի նիհար հանեցին, ձեր ըլլալու համար, ասի ամէն քաջած չարչարանքներէս աւելի դժուար եկաւ, թիւրքիայի կատալարութեան պէս չէ որ 150 զրուշ ունիմ բըշլէթ տամ և ընկերներէս չգատուիմ: Ինչ օգուտ մէկ կողմէն կուլամ, մէկ կողմէն խնտալով ընկերներէս գատուեցայ Գահիրէ եկայ: Սրճարաններու խորը, լեզու չունիմ արհատ չունիմ 36 օր կանցունեմ. Նորէն Աստուծոյ ողորմութեանը և մարդասիրութեանը փառք թող ըլլայ, Աստուած Ղայոց ազգին պակասութիւն թող չտայ: Փօրթ Սայիտ 27 օր մնացի և ընկերներէս 2 հատը Մարկարոս իսգապեան Թարսուսցի, Սարգիս Գրիգորեան Այն թապցի 30 հոգիէն 3 հատ անկարող հանեցին, միւս ընկերները կիպրոս զրկեցին: Երեքնիս մնացինք հիմա բըժիշկին քովը, ես գարթանին քովը գացի լացի, Պաղտատէն հոս ուրախանալով եկած եմ հիւանդութիւն մը չունիմ, ես թիւրքէն վրէժ լուծելու համար եկած եմ կը խնդրեմ զիս ընկերներէս մի գատէք, ինծի ալ անոնց հետը կիպրոս զրկեցէք, որքան ալ Ղանացի օգուտ չունեցաւ: Մտատանջութենէս հիւանդացայ, Մտածմունքս ինչ է, ես Գահիրէ երթամ արաբերէն չեմ զիտեր, մարդ չեմ ճանչնար, որո՞ւ հետ պիտի նստիմ տկասկցիմ, ետքը ձեռքերնիս մէյմէկ թուղթ առին Գահիրէ զրկեցին:

Գիշերով եկանք Գահիրէ եկեղեցւոյն բակը պարկեցանք, առաւօտ եղաւ ելանք Թարսուսցի Յակոբ անու-

նով տղայ մը դասնք առաւ մեզ Ազգային սրահ տարաւ,
հոն Տօքթօր Բէչէճեան, Տօքթօր Նաւրուզեան, Տխարք Ա.
Ասլանեանը և Աճէմեանը կային, ձեռքերնիս գտնուած
անցագիրը աւելնք, հարցուցին թէ՛ ձեզ ի՞նչու ջիւրիւք
հանեցին, հիւանդութիւննիդ ի՞նչ էր : Մարտիրոս Սեբոս-
եանը ըսաւ թէ՛ սուքերս ուժ չկայ, Սարգիս Գրիգորեանն
ալ ըսաւ թէ՛ իմ հաւկիթներս վար իջաւ : Ձեզի լաւ ը-
նենք նէ ետ կերթա՞ք : Անոնք ալ, այո՛ կերթանք ըսին :
Այն ժամացի Սարգիսը լաւ չըրածէն զրկեցին, ինծի հար-
ցուցին, քու հիւանդութիւնդ ի՞նչ է, Հիւանդութիւն մը
չունիմ, միայն թէ տարիքս մեծ ըլլալուն համար զրկե-
ցին, քեզի ալ թող ազգը մտածէ ըսին : Պէնի Սուրէնի
մէջ ամիսը 30 զրուշի սենեակ մը բռնեցին և Ուրֆայի
ընկեր մը տուին ինծի անար հետ եղբօր պէս կը սրար-
կինք, իրիկունները օրական 8 զրուշ կանննք ուտելի-
քի համար անով կանցունենք օրերնիս : Ամիս մը վերջ
մեզի 4 հոգի ըլլալով Ասաջնորդարանը կուգէ, ձեռքերնիս
քարթ մը տուին և Մաթոսեաններուն զրկեցին մե-
զի գործ մը տալու համար : Մաթոսեանի քարթը առելնք
մեր վիճակները հարցուց Տաճկաստանէն ի՞նչպէս եկաք,
ի՞նչ անցաւ զուխներնէդ, և մենք ալ անցած դարձածք
պատմեցինք : Միւսիւ Մաթոսեան ցաւած մեր վրայ ըսաւ
թէ՛ հոս առողջ մարդիկ հիւանդ կըլլայ կը մեռնի, դուք
հոս չէք կրնար գիմանալ, ձեզի երեքական օսկի դրամ
տամ և դուք գացէք ես թէլէֆօնով կը խօսիմ ձեզի թե-
թեւ գործ մը գուցնեն, որ կարենաք աշխատիլ, և 4 հա-
զիրն 12 օսկի դրամ տուաւ : Ուրախանալով եկանք,
Մեկքոսեաններուն զրկեցին, ան ալ գործ չկայ ըսաւ, 2
օր յետոյ Ազգային Սրահը գացինքք, Ասլանեանը ըսաւ
թէ՛ Մաթոսեաններէն ձեզի տրուած երեքական օսկին բե-

րէք և Աճէմեանին հետը գացէք ձեզի մէյմէկ՝ ձեռք հա-
գուստ թող զնէ, վաճառատուն մը գացինք միւս երեք
ընկերներու Չական ոսկինոց հագուստ առաւ, ինծի ալ
առնելու եղաւ, ես ըսի թէ՝ միւսիւ Աճէմեան հոս զեղեց-
կութիւն ծախելու չեկայ, վաղը օրականնիս կտրուած ժա-
մանակներուն պիտի երթամ ձեռքս բանամ. ես գործ չեմ
կրնար գործել. սակայն կը մտածեմ թէ՝ զքետ առնեմ
բերանս ակուայ չի կայ, ակուայ չինել տամ՝ չէ թէ ծած-
կոց չունիմ, ծածկոց առնեմ՝ ամենէն աւելին կերակու-
րին գործը դժուար է զայն մտածեցի, անոր համար բան
մը չկրցայ առնել : Միւս ընկերներս հագուստ և մահճա-
կալ առին և ստակնին ըմբոսցին երեք ոսկիէն պակասն
ալ ազգայինէն ըմբոսցին և ասանկով ամէն պակասու-
թիւննին ըմբոսցին :

Իմ ստակս փախթոյիս ճէպն էր և անյայտացաւ,
թէ՝ զբամս գողցուեցաւ, թէ՝ մահճակալի սէր չեկայ,
ես, ոչ մահճակալ առի ոչ ալ հագուստ մերկ և առանց
ծածկոցի մնացի, ձմեռուան այս ցուրտ նզանակին, մտա-
ծելէս խեւ պիտի ըլլամ, իմ զլիտուս եկած այս զըծ-
բաղդութիւններուն . որ մէկէն չազատած միւսին կը պա-
տահիմ, Վերջը մտածեցի որ այնքան ինչքերս, տունս,
ընտանիքս և զաւակներս կտրանցուցի, աս ալ թո՛ղ երթայ,
ըսելով, թող աուր, իրիկուն եղաւ օրական առնելու
գացինք Աճէմեանին քովը, ըսաւ թէ՝ գործ մը գտէք
մինչև ամսու զլուխը օրականնիդ պիտի կտրուի, զը-

լուխնուդ ճառը գտէք՝ Մտածեցի որ արհեստ չունիմ և ծեր մարդ մ'եմ, այս մտածած ժամանակս, Միհրան Շարպազեանին հետ տեսնուեցայ, ըսաւ թէ՛ երբէք մի՛ մտածիր Հաճի աղա, այս գլխուդ եկածները դուն գրէ ինձի տուր։ Ես ալ գրեցի։ Յետոյ վերագացուց շատ լաւ է, ըսաւ միայն թէ՛ աշխատէ որ միջոց մը գտնաս սպաղորութեանը համար։

Յետոյ Մարաշցի ճերմագեան Շուքրի էֆէնտին տեսայ, ըսաւ թէ՛ մի՛ մտածիր, Հաճի աղա, Աստուած ուղորմած է․ քովս եկուր, ես ինչ որ ուտեմ, դուն ալ ան կեր, որքան ալ խօսեցաւ, չուզեցի ամչցայ։ Յետոյ այսպիսի սուղ ժամանակի մը մէջ, գրքոյկիս սպաղորութեան ամբողջ ծախքն ալ հոգաց, որուն շնորհիւն է որ հրապարակ կը հանեմ, և զայս կը նուիրեմ ազգակիցներու, որ կատարեալ Զէյթունի յիշատակը պիտի բլայ իրենց, և իրենց նուիրատուութիւնովը, ինձի ալ սպազայ մը պատրաստելու համար դրամագլուխ մը պիտի հայթայթէ։

Աստուած միշտ պայծառ պահէ, այսպիսի բարերարներուն օրը․ որուն յաւիտեանս երախտապարտ եմ։

Զէյթունի միջի բաղէն
ԳՕՄՈՒՎԵԱՆ ԷԱՃԻ ԿԱՐԱՊԵՏ

